№ 194 ՈՒՐԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 194

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 4 րուբլի:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

յայտնում է, որ Պետերբուրգի կանանց Բժշկական Ինստիտուտում ունեցող քաղաքային ստիպենդիան արդէն ազատ է Թիֆլիսեցի այն օրիորդների համար, առանց ազգի և դաւանանքի խտրութեան, որոնք աւարտել են Թիֆլիսի I կամ II կանանց գիմնազիան:

Խնդիրները, անհրաժեշտ դօկումենտների հետ միասին՝ պէտք ներկայացնել մինչև ներկայ սեպտեմբերի վերջը Քաղաքային Վարչութեան I բաժանմունքը:

(ա. օ.) (առ.) 900. 3—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՎԱՌ. ՍՄԲԱՏԵԱՆՑԻ

Պատրաստվում են երկսեռ աշակերտներ բոլոր միջնակարգ (և Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան) դպրոցներ ընդունվելու: Աւանդվում են նաև ֆրանսերէն, գերմաներէն, ձեռագործ՝ կերտուածք (лѣпка), դաջում (выжиганіе) և կողովագործութիւն (плетеніе корзинъ), մարմնամարզութիւն: Ընտանիքիս մէջ միասին ապրելու կայ 2 աշակերտի տեղ: Ընդունելութիւնը սկսված է, Սօլօլակ, փող. Պասկեվիչի № 13.

(չ.ու.շ.կ.) առ. 888. 4—2

ԸՆՏՐՈՂՆԵՐԸ ԵՒ ԸՆՏՐՎՈՂՆԵՐԸ

Ովքե՞ր պէտք է լինեն ընտրողները տեղական ինքնավարութեան մէջ:

Այդ հարցին մենք պատասխանեցինք:

Մենք ասացինք, որ ընտրելու իրաւունք պէտք է ունենան այն բոլոր անձերը, որոնք որևէ գեմստվային տուրք են վճարում:

Որքան էլ աննշան լինի այդ տուրքը, այնուամենայնիւ նա պէտք է իրաւունքի հիմք ծառայէ ամեն մի քաղաքացու համար մասնակցելու տեղական ինքնավարութեան գործում:

Սակայն մի ուրիշ հանգամանք գալիս է բարդութիւն մտցնելու ընտրողական գործի մէջ:

Դա կուրիաների բաժանվելու խնդիրն է:

Այսինքն այն, որ ընտրողները բաժանվում են դասերի և նրանցից իւրաքանչիւրը կատարում է ընտրութիւնները առանձին:

Օրինակ՝ կալուածատէրերը հաւաքվում են առանձին և ընտրում իրանց միջից ձայնաւորների մի մասը, գիւղական հասարակութիւնները ընտրում իրանց ներկայացուցիչներին, առևտրի և քաղաքի պարապմունքների մարդիկ ընտրում իրանց միջից ներկայացուցիչներին:

Կուրիաների բաժանվելու սկզբունքը հանդէս է բերվում յաճախ այն պատրուակով, որ նրանով մի տեսակ երաշխաւորվում և ապահովվում են ներկայացուցչութեան լիակատարութիւնը և արդարութիւնը. բայց յաճախ նրանք առաջ են մղվում, որպէսզի պաշտպանված լինեն խոշոր կալուածատիրութեան կամ դրամատիրութեան շահերը

Զեմստվային այն խորհրդակցութիւնը, որ տեղի ունի Թիֆլիսում, նկատելով, որ կուրիաների սկզբունքը անխուսափելի կերպով գործադրվելու է իրականութեան մէջ, որոշեց մեղմացնել նրա անյարմար կողմերը հետևեալ որոշումով:

Նա նպատակայարմար դատեց ձայները բաժանել կուրիաների մէջ՝ համեմատ այն գեմստվային տուրքի, որ նրանք վճարելու են, և ուրեմն չը նախասահմանել այնպիսի արտօնութիւններ, որոնք երաշխաւորված են կալուածատէրերի և դրամատէրերի թելադրութիւններով, իբրև նուազագոյն չափեր:

Այդ որոշումը մեղմացնում է դրութիւնը, բայց այդ բաւական չէ ներկայացուցչութեան կատարելութեան համար:

Եւ մենք առիթ կունենանք պարզելու այդ խնդրին վերաբերեալ հետաքրքրական կողմերը:

Ա. Քալանթար

ԿԱՅՍՐԸ ՍԵՎԱՍՏՈՊՈԼՈՒՄ

Սեվաստոպօլ, 2 սեպտեմբերի

Երէկ կէսօրին Կայսերական «Շտանդարտ» զբօսանաւի վրա տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշ, որին հրաւիրված էին մի քանի պաշտօնական անձեր: (Հ. Գ.)

—

Սեվաստոպօլ, 2 սեպտեմբերի

Կայսերական Պալատի մինիստրի հեռագիրը. «Երէկ կէսօրին Թագաւոր Կայսրը բարեհաճեց «Շտանդարտով» անցնել ստորջրեայ նաւակների շարքերով, որոնց հրամանատարների հետ բարեհաճեց բարևել: Յետոյ Կայսրը հաճեց իջնել «Կարպ» ստորջրեայ նաւակը: Կայսրը բարեհաճեց մանրազննին կերպով նայել նաւակի բոլոր մասերը, յետոյ ուրաների բացագանչութեան տակ վերադարձաւ զբօսանաւը: Վերադարձին բարձրացվեց նշան՝ «Թագաւոր Կայսրը Իր գոհունակութիւնն է յայտնում ստորջրեայ նաւերի նաւաստիներին և ցանկանում է բաղդաւորգոր ծունէութիւն»: (Հ. Գ.)

—

Սեվաստոպօլ, 2 սեպտեմբերի

Բերդապահ զօրքը հանդիսաւորութեամբ տօնեց իր տօնը: Մաղթանքից յետոյ տեղի ունեցաւ զօրահանդէս: Զօրքերի հրամանատարը, գալով «Շտանդարտ» զբօսանաւից, հաղորդեց զօրքին Թագաւոր Կայսրի ողջոյնը և շնորհաւորանքը: Իբրև պատասխան՝ լսվեց հզօր, անվերջ «ուրա», որ խառնվեց ազգային օրհներգի հետ: (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 28 օգոստոսի

Հայոց պատրիարք Դուրեանի կօնֆլիկտը Թիւրքաց կառավարութեան հետ մեծ յուզմունք է առաջացնում Թիւրքիայի և Փոքր-Ասիայի հայերի շրջանում: Պատրիարքը պնդում է այն բանի վրա, որ այն հայերը, որոնց մահվան պատիժը տեղի ունեցաւ Ադանայում, կրակել են անհրաժեշտ պաշտպանութեան դրութեան մէջ, և այդ պատիժը ապօրէն է և հակասում է կառավարչական հաղորդագրութեանը Ադանայի կոտորածների մասին:

Պատրիարքը յայտնում է, որ, ասպարէզ գալով ի պաշտպանութիւն իր հօտի, նա կատարում է իր պարտքը, և, ի նկատի ունենալով Թիւրքաց կառավարութեան կատարած ապօրինութիւնը, նա դիտաւորութիւն ունի դիմել եւրօպական պետութիւններին գործի էութիւնը բացատրելու համար:

Այն հանգամանքը, որ պատրիարքական կօնֆլիկտի հետ միաժամանակ տեղի ունեցաւ և հասարակական աշխատանքների մինիստր հայազգի Նորատունկեանի հրաժարականը, աւելի ևս սաստկացնում է հայերի յուզմունքը: Նորատունկեանի հրաժարականը, որպէս յայտնի է, կամաւոր չէ և տեղի է ունեցել երիտասարդ-թիւրքերի կօմիտէտի ճնշման տակ, որի միջամտութեան դէմ կառավարչական գործերում Նորատունկեանը միշտ բողոքել է:

Այդպիսով հայերի և երիտասարդ-թիւրքերի միջև եղած բարեկամութիւնը սկսում է քանդվել և ստեղծվում է այն թշնամական անհաշտութիւնը, որը բաժանում էր նրանց հին ռեժիմի ժամանակ:

—

Կ. Պօլիս.—Դարդանէլի հարցը շարունակվում է բանակցութիւնների առարկայ դառնալ: Որքան այժմ պարզվում է, այդ հարցի հետ սերտ կապ ունի կապիտուլացիաների հարցը:

Եւրօպական պետութիւնների կապիտուլացիան Թիւրքիայում, այսինքն նրանց սեփական դատարան ունենալը, վերջին մնացորդն է օտարազգիների տիրապետութեան Թիւրքիայում: Թէ կառավարութիւնը և թէ երիտասարդ-թիւրքերի կօմիտէտը մեծ նշանակութիւն են տալիս կապիտուլացիաների վերացմանը, որպէս և վերացվել են արդէն ֆինանսական կօնտրօլը և գլխաւոր տեսչի պաշտօնը Մակեդոնիայում:

Քաղաքական շրջաններում լուրեր են պտտում, որ Ռուսաստանը և Ֆրանսիան արդէն դրական առաջարկութիւններ արեցին Բ. Դրանը այն մտքով, որ նրանց կողմից ոչինչ արգելքներ չը կան վերացնելու կապիտուլացիաները, բայց դրա փոխարէն ցանկալի է, որ զիջումներ անվեն Ռուսաստանին Դարդանէլի հարցում:

Որքան յայտնի է, այդ առաջարկութիւնները լաւ ընդունվեցին Բ. Դրան կողմից:

Անգլիան և Իտալիան դեռ ևս իրանց կարծիքը չեն յայտնել, բայց կարծում են, որ կապիտուլացիաների հարցում նրանք համերաշխ են Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ: («Б. В.»)

—

Կ. Պօլիս, 2 սեպտեմբերի

Ադանայում մահվան պատժի դատապարտված հինգ հայերին կախաղան բարձրացրին:

Բ. Դռան բանակցութիւնները հայոց պատրիարքի հետ անօգուտ են: Պատրիարքը պնդում է իր հրաժարականի վրա: (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Ճգնաժամը շարունակվում է հայոց պատրիարքարանում: Պատրիարքական խորհուրդը յայտնեց Բ. Դրան, որ իր ամբողջ կազմով հրաժարական կը տայ, եթէ մինչև չորեքշաբթի բաւարար պատասխան չը ստացվի մահվան դատապարտված հայերի վերաբերմամբ:

Մինիստրների խորհուրդը յանձնեց արդարադատութեան մինիստրութեանը՝ վերաքննել դաշտային դատարանի գործավարութիւնը Ադանայում: Ադանայից հեռագրում են, որ մի քանի հարիւր հայերի ազատել են բանտերից, ուր նրանք գտնվում էին զինուորական դատարանի վճռով: Դա համարվում է որպէս հայերին գոհացնող մի ակտ: («Б.»)

—

Կ. Պօլիս, 2 սեպտեմբերի

Թիւրքական երկու նաւեր հասան Կունֆուդու (Եմէնում), ուր սպանվեց տեղական միւթէսարրֆը և արաբները ոչնչացրին Թիւրքական երկու բատալիօններ: Թիւրքաց էսկադրայի մնացած մասը Սուէզի ջրանցքով մտաւ Կարմիր ծովը: (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Այստեղի քաղաքական շրջաններում պտտող լուրերի համեմատ, բանակցութիւնները Դարդանէլի հարցի մասին պարզեցին, որ Բ. Դուռը համամիտ է զիջումներ անել Ռուսաստանին այդ հարցում, սակայն այն ժամանակ միայն, երբ տեղի կունենայ Թիւրքական նաւատորմի վերակազմութիւնը և Թիւրքիան զօրեղ ծովային պետութիւն կը զգայ իրան:

—

Բերլին, Կ. Պօլսից հեռագրում են, որ, լուրերի համեմատ, Աբդիւլ-Համիդը, զիջելով երիտասարդ-թիւրքերի կօմիտէտի պահանջներին, վճռեց ետ պահանջել իր պահեստի գումարները եւրօպական բանկերից Կ. Պօլսում:

—

Սալօնիկ, 2 սեպտեմբերի

Ռուսաց հիւանդանոցի վերջանալու առիթով տեղի ունեցաւ հիւանդանոցի յանձնաժողովի նիստը Աֆօնից եկած այն վանքերի լիազօրների մասնակցութեամբ, որոնց միջոցներով հիւանդանոցը կառուցվեց:

Սալօնիկի նախկին գեներալ-հիւպատոս Գիրսի ձեռներէցութեամբ, որ եկել էր այդ գործը գլուխ բերելու, հիւանդանոցը անուանվեց Ս. Դմիտրի Սօլունսկու անունով և հաստատվեց սկզբում 14 մահճակալ, հիմնելով անդամահատութեան դահլիճ, ամբուլատօրիա, դեղատուն և կլինիքական լաբօրատօրիա: Հիւանդանոցի բացումը տեղի կունենայ դեկտեմբերի սկզբին: (Հ.Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Բաքու, 28 օգոստոսի

Թէհրանում կազմվել է րէակցիօներների գաղտնի ընկերութիւն, որի ղեկավար անդամների թւում գտնվում է նախկին սադրազամ պետական յայտնի գործիչ Ամին-ուդ-Դօվլէի որդի Ամին-ուդ-Դօվլէն:

Թէհրանի նոր կառավարութիւնը, ի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ես կատարեցի դարձեալ մի ճանապարհորդութիւն դէպի մեր գաւառական աշխարհը:

Այս անգամ այցելեցի Ախալցխայի գաւառի մի անկիւնը:

Ես կը հաղորդեմ մի քանի գծեր այդ ճանապարհորդութիւնից, յոյս ունենալով որ նրանք հետաքրքրական կը լինեն իմ ընթերցողների համար:

Երկաթուղու գնացքով մենք հասանք Բօրժօմ վաղ առաւօտեան:

Կառապանները շրջապատեցին մեզ և առաջարկում էին էժան գնով տանել Ախալցխա:

Արդարև նրանք թանգ գին չէին պահանջում, որովհետև արդէն վերջացել էր ամառանոցի կեանքը և մարդիկ շտապում էին վերադառնալ իրանց քաղաքները:

Աբասթումանից, Ախալցխայից, Ուրավելից բոլորը շտապում էին դէպի երկաթուղի, իսկ շատ սակաւ էր այն անցորդների թիւը, որոնք երկաթուղու կայարանից գնում էին Ախալցխա և նրա գաւառը:

Բօրժօմից մինչև Ախալցխա և Աբասթուման երթևեկութիւնը կատարվում է մեծ մասամբ կառքերով և հանրակառքերով, իսկ վերջին շաբաթներում նաև աւտօմօբիլով:

Տեղական կառապանները թշնամաբար վերաբերվեցին աւտօմօբիլին, տեսնելով դրա մէջ վտանգաւոր մրցակցի:

Մենք էլ յոյս ունէինք գնալ աւտօմօբիլով:

— Ո՞ւր է ձեր աւտօմօբիլը,—եղաւ մեր ընդհանուր հարցը Բօրժօմի կայարանում:

— Խախտվել է, չը կայ,—պատասխանեցին մեզ.—մի քանի օր բանեց և կանգ առաւ, որովհետև մեքենան փչացել է, այժմ կարկատում են:

Մենք վարձեցինք կառքեր և ճանապարհ ընկանք: Բայց չէինք անցել և մի վերստ՝ մեր հանդէպ ելաւ աւտօմօբիլը, որ շտապում էր դէպի երկաթուղու կայարանը:

— Ուշացել է,—բացագանչեց ուրախութեամբ մեր կառապանը:

Աւտօմօբիլն անհետացաւ, գնաց դէպի կայարան, վերցրեց մի-երկու մարդ և նորից վերադառնալով անցաւ մեր մօտից արագութեամբ:

Մի կէս ժամից յետոյ մեր կառապանը կանգնեցրեց կառքը, իջաւ ցած և փոքր ինչ յետ գնալով վերցրեց ճանապարհից մի կոտրած զսպանակ և եկաւ:

— Աւտօմօբիլի կտորն է,—յայտնեց նա գոհութեամբ:

— Երևի կորցնեն,—նկատեցինք մենք:—Ո՞րտեղ կը տեսնես, որ տաս իրանց:

— Դէն կը գցեմ, բայց չեմ տայ տիրոջը,—կտրուկ արտասանեց կառապանը:

— Քեզ ինչ հարկաւոր է զսպանակը:

— Ինձ հարկաւոր չէ,—առարկեց կառապանը—բայց աւտօմօբիլը մեր մրցակիցն է: Ինչո՞ւ պէտք է ես իմ թշնամուն ծառայեմ:

— Միևնոյնն է առանց այդ զսպանակի էլ նրանք նորից կը դրստեն իրանց կառքը, և նա կը շարունակի մրցել:

— Ինչ որ կանեն՝ իրանց գիտենալիքն է. բայց ես չեմ վերադարձնի այդ զսպանակը: Աւտօմօբիլի մարդիկը շատ են դաղել մեզ, թոյլ չեն տալիս, որ նոյնիսկ մօտենանք նայելու:

Վիճաբանութիւնը շարունակվեց և անցաւ ուրիշ դէպքերի և առարկաների:

Յետո՛յ պարզվեց, որ այդ զսպանակը ոչ թէ աւտօմօբիլից է կտրվել և ընկել, այլ հեծանիւից, վելօսիպեդից:

Ինձ հետ ուղեկցող ածխուրեցի Թուրքը սիրտ առաւ այդ տեղեկութիւնից և ասաց կառապանին.

— Աւտօմօբիլը առանց քո օգնութեան մնաց. բայց դու մի բարի ցանկութիւնից զրկվեցիր:

— Աւտօմօբիլի տէրը ամենևին չէ մտածում մեր մասին,—վրա բերեց կառապանը:

— Ես կը պատմեմ մի հին դէպք մեր գիւղի եղելութիւնից,—յայտնեց ածխուրեցին.—նման է փոքր ինչ ներկայ դէպքին:

Եւ նա պատմեց հետևեալը.

«Մի անգամ մի դաղստանցի, որ լինում է Ախալցխայում, Ածխուրի հողերով անցնելուց իջնում է մի խոտաւէտ տեղում, հանգստանալու և իր ձին փոքր ինչ կերակրելու:

«Յանկարծ վրա է հասնում հողի տէրը, Թօրաման Ղավազը, բռնում դաղստանցուն, հայհոյում և ծեծում նրան:

«— Ի՞նչպէս համարձակվեցիր դու իմ խոտը ուտեցնել քո ձիուն,—բոռում է Թօրամանը:

«— Չեմ իմացել, նեքիր,—աղերսում է դաղստանցին.—Նոր եմ իջել, ձիուս կերածը մի չնչին բան է:

«Դաղստանցին հեռանում է և դէպքը մոռացվում է:

«Այնուհետև այնպէս է պատահում, որ Ախալցխայի շրջանում յայտնի անուն և դիրք ունեցող Ալիբէգ Աթաբէգօվ Կօբլեանսկին միլիցիա է ժողովում գնալու Դաղստան՝ օգնելու ռուսաց զօրքերին: Այդ միլիցիայի մէջ է մտնում նաև Թօրաման Ղավազը և գնում Դաղստան:

«Զանազան արշաւանքներում մասնակցելուց յետոյ մի անգամ Թօրամանը իջած է լինում Դաղստանի մի տեղում: Պատահաբար այդ տեղին մօտենում է մի դաղստանցի, նայում է Թօրամանին և նրա ձիուն և, ճանաչելով Թօրամանին, առաջարկում է գնալ մերձակայ գիւղ և հիւրասիրվել նրա մօտ: Թօրամանը դժկամակում է, բայց յետոյ համաձայնում է: Դաղստանցին պատուիրում է իր մարդկանց՝ ձիուն խոտ տալ, իսկ ինքը հիւրասիրում է Թօրամանին կերակրով: Յետոյ դիմելով Թօրամանին հարցնում է.

«— Ճանաչում ես արդեօք ինձ, թէ ես ով եմ:

«— Ոչ, չեմ ճանաչում:

«— Մենք միմեանց տեսել ենք մի ուրիշ տեղում:

«— Չեմ յիշում,—պատասխանում է Թօրամանը:

«Այն ժամանակ դաղստանցին յիշեցնում է, որ ինքը այն դաղստանցին է, որին նա ծեծել էր Ածխուրի հողերում ձիուն խոտ տալու համար:

«Թօրամանը սկսում է մտաբերել դաղստանցու դէմքը:

«— Եթէ ես քեզ նման վարվէի,—ասում է դաղստանցին,—պէտք այսօր էլ խոտի համար ես քեզ ծեծէի. բայց ոչ, դու իմ հիւրս ես. կուշտ և ուրախ անցէք իմ տան և գիւղի մօտով՝ դու էլ, ձիդ էլ:

«Թօրամանը սաստիկ յուզված ներողութիւն է խնդրում:

«— Բայց եթէ իմանայիր, բարեկամ,—աւելացնում է նա,—թէ այս քո պատիւը որքան աւելի խիստ է ինձ համար, քան եթէ ուղիղ ինձ ծեծէիր այժմ:

«Դաղստանցին իրան համարում է շատ գոհ իր այդ ձևի վրէժառութիւնից. իսկ Թօրամանը անվերջ ներողութիւններ և շնորհակալութիւններ յայտնելուց յետոյ հեռանում է:

«Այնուհետև Թօրաման Ղավազը երբ վերադարձաւ հայրենիք, յայտնի դարձաւ իբրև գիւղի ամենահիւրասէր մարդկանցից մէկը: Եւ նա սիրում էր պատմել ուրիշներին իր գլխին եղած այս խրատական դէպքը»:

մանալով այդ ընկերութեան երեան գալու մասին, միջոցներ ձեռք առաւ և ձերբակալեց առայժմ նրա յայտնի անդամներից՝ Աղա-Սէյիդ-Մահմէդ-Նազդիին, Միրզա-Աղա-Իսպահանիին, Մօանդ-Սալթանէին, Միրզա-Աբդիւլ-Մութալիբին, Միւրք-Օրամին և Մէջիդ-Իսլամին: Ամին-ուդ-Դովլէն փախաւ:

Ասում են, որ մեծ բազարի հրդեհը, ուր այրվեցին 50-ից աւելի խանութներ, և որոնց վնասը հաւասարվում է մի միլիօն րուբլու, նոյնպէս բէակցիօնէրների գործն է:

Օգոստոսի 27-ին, ցերեկվայ ժամը 2-ին, Չերգէնդէից մեկնեց նախկին շահը: Ոչ մի միջադէպ չը պատահեց: Գիլանում հանգստութիւն է տիրում: («К.»)

—

Թէհրան, 26 օգոստոսի

Գիշերը հրդեհ բռնկեց գլխաւոր շուկայի վրա: Վնասը հասնում է 1 միլիօն րուբլու: Հրդեհի պատճառը, որպէս ենթադրում են, սնանկացած վաճառականներ են, որոնք դիտմամբ կրակ են գցել իրանց խանութները: Հրդեհի ժամանակ, առաջին անգամ այդպիսի դէպքերում, նկատված էր օրինակելի կարգ: («Б. В.»)

—

Օգոստոսի 30-ին զինուորական «Գեօկ-Թէփէ» նաւը, ցերեկվայ ժամը 12-ին, Բագուից դիմեց Էնզէլի՝ պարսկական նախկին շահին ուղեկցելու համար, որ օգոստոսի 27-ին դուրս էր եկել Թէհրանից: Նաւի հետ գնացին Էնզէլի «Կավկազ և Մերկուրի» ընկերութեան առաջնակարգ «Սկօբելեվ» նաւը, որով Մահմէդ-Ալի շահը ծովով կը մեկնէ մինչև Պետրովսկ, անցնելով Բագուի վրայով: Հիմք կայ ենթադրելու, որ շահը կը ցանկանար խուսափել Բագւով անցնելուց, վախենալով դէպի ինքը թշնամաբար տրամադրված պարսկահպատակների ցոյցերից: («Б.»)

—

Պետերբուրգ.—Այսօր ճեպընթաց գնացքով Պետերբուրգից Պարսկաստան է ուղևորվում Պարսկաստանի արտակարգ դեսպան կամերհէր Պօկլեվսկի-Կօզէլ: («Б.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվա, 2 սեպտեմբերի

Ոստիկանութիւնը ձերբակալեց շուշեցի Տագիրովին, որի մօտ գտնվեցին երկու զամբիւղ զէնք, որ ուղարկվելու էր Պարսկաստան: (Հ. Գ.)

—

Հեռագիրը տխուր լուր բերեց: Յայտնի օդագնաց ֆրանսիական ինժեներ Լեֆեվր օդապարիկով թռչելու ժամանակ Պարիզի մօտերը ընկաւ օդապարիկի հետ միասին և ստացաւ այն աստիճան ուժեղ ջարդուածքներ, որ շուտով մեռաւ: Ինժեներ Լեֆեվրը ունէր թէև կողմնակի, բայց մեծ ազդեցութիւն օդագնացութեան զարգացման վրա Ռուսաստանում: Հանգուցեալը Ռայտի պատենտը գնած ֆիրմայից նշանակված էր ուսուցանելու Ռուսաստանի ներկայացուցիչներին օդապարիկներով թռչել: Լեֆեվրի ղեկավարութեամբ օդագնացութեան շրջանն անցնելու էր ի միջի այլոց նաև Ռուսաստանի ներկայացուցիչ կապիտան Նեմչենկոն և օդապարիկի գնման Պետերբուրգի փայտէրերի ընկերութեան ներկայացուցիչ Վ. Լեբեդեվը: Լեֆեվրը անձամբ պէտք է այցելէր Ռուսաստան զանազան քաղաքներում օդապարիկով փորձեր անելու համար: Ռէյմսի վերջին մրցութիւնների ժամանակ հանգուցեալ Լեֆեվրը փայլուն հետևանքների հասաւ իր վարժութիւններում: («С. С.»)

—

Ի նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս շատ հրեայ ուսանողներ ընդունում են քրիստոնէութիւն, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հրահանգով կարգադրել է համալսարաններին ընդունել սոսկ նրանց, որոնք մկրտվել են մինչև օգ. 20-ը: («Кс.»)

—

Աթէնք, 27 օգոստոսի

Ֆալերօն նաւահանգիստը եկան ռուսական երկու մարտանաւեր: Աթէնքում նորերս տեղի ունեցած դէպքերի պատճառով ռուսաց զինուորական նաւերի գալուստը խօսակցութեան առարկայ է:

Դրութիւնը շարունակում է անորոշ մնալ: Բոլորը սպասում են պարլամենտական շրջանի սկսվելուն:

ՊԱՏԱՆԻ ՇԱՀԻ ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԸ

Նոր շահի դաստիարակը, որպէս յայտնի է, Սմիրնօֆն է, ռուսաց զօրքի նախկին օֆիցերը:

— Ի՞նչպէս է ձեր աշակերտը,—հարցրի ես նրան:

— Չը գիտեմ, չը գիտեմ...

— Ի՞նչպէս:

— Շատ պարզ: Ահա երկու շաբաթ է, որ ես չեմ տեսնվում նրա հետ և նրա մասին նոյնքան գիտեմ, որքան և դուք:

— Ի՞նչն է պատճառը: Երևի, նրան խանգարում են պետական գործերը:

— Ոչ, պատճառները շատ հասարակ են: Մի խօսքով, աշխատում են ինձ հեռացնել և իմ տեղ մի ուրիշին նստեցնել: Սկզբում իմ պաշտօնն ուզում էին տալ մի անգլիացու, բայց վերջերս նացիօնալիստները յաղթեցին, և օտարազգիների տեղ շահը պարսիկ ուսուցիչներ կունենայ:

— Բայց մի՞թէ նրանք կը գտնեն կրթված պարսիկներ, որոնք կարողանային փոխարինել եւրոպացիներին:

— Որքան կամենաք: Եթէ ձեզ հետաքրքրում է, կարող եմ ձեզ կարդալ արդէն իրանց համաձայնութիւնը յայտնող անձանց ցուցակը:

Նա մի թերթ հանեց և կարդաց ինձ:

— Ֆրանսիական լեզուի, աշխարհագրութեան, պատմութեան և թւաբանութեան ուսուցիչ նշանակվում է Զօկա-ուլ-Միւլք, արաբական և պարսից լեզուների ուսուցիչ նշանակվում է Սէիդ-ուլ-Ուլէմա. և վերջապէս ամենագլխաւոր ուսուցիչը, որի վրա դրվում է Ղուրանի նրբութիւնները բացատրելու պարտաւորութիւնը, կը լինի Խօջա-Ախունդը: Բացի այդ երեք անձերից, էլի մի պարսիկ կը նշանակվի, որպէս ռեպետիտոր և մի տեսակ դաստիարակ, Խօջա-Սէիդ անունով, կարծեմ, եթէ չեմ սխալվում:

— Իսկ ձեր դերն ի՞նչ է:

— Ստիպված կը լինեմ հեռանալ:

— Դուք դժգո՞հ էք:

— Ամենևին: Ինձ չուզելու դէպքում պարսից կառավարութիւնը պարտաւոր է վճարել ինձ տուգանք 19 հազար թումանի: Այնպէս որ ես ոչինչ կորցնելու չունեմ, այլ շահ ունեմ:

— Կառավարութիւնը ի՞նչ գումարներից կը վճարէ մի այդպիսի գումար, երբ նրանց համար ամեն մի շահի նշանակութիւն ունի:

— Քանի որ պատռում են պայմանագիրը, թող վճարեն և տուգանքը: Հաւանական է, որ այդ տուգանքը ստիպէ նրանց մտածել և թողնեն ինձ իմ պաշտօնում: Պարսիկ ուսուցիչների դէմ ես ոչինչ չունեմ, բայց ռուսաց լեզուի հասարակ ուսուցչի դեր ստանձնելուն ես նոյնպէս չեմ համաձայնվի: Ես եկայ այստեղ վալիահդի դաստիարակը և նրա ընդհանուր զարգացման ղեկավարը լինելու համար: Եթէ կուզենան հեռացնել պաշտօնից, այն ժամանակ ես պայմանագիրը խախտված կը համարեմ:

— Իսկ ի՞նչ կասէք շահի նոր ուսուցիչների մասին: Արդեօք բաւարար կրթութիւն ունե՞ն նրանք իրանց պարտաւորութիւնը կատարելու համար:

— Օ, նրանք շատ գիտուն մարդիկ են և կարող են կրթված համարվել ոչ միայն արևելեան, այլ և եւրոպական տեսակէտով: Զօկա-ուլ-Միւլքը, օրինակ, համարձակ կարող է գիտնական համարվել եւրոպական բառի իմաստով: Ես ներկայ էի նրա գիտական զեկուցումներից մէկին: Նա ֆրանսերէն լեզուով, որին կատարելապէս տիրապետում է, շատ մանրազնին զեկուցում կարդաց պարսկական լեզուի առանձնայատկութիւնների և նրա ազդեցութեան մասին եւրոպական լեզուների վրա: Նոյն օրը զեկուցում կարդաց,—նոյնպէս մի շատ հետաքրքրական աշխատութիւն,—պարսկական կուլտուրայի ազդեցութեան մասին արաբականի վրա: Վերջին զեկուցումը կատարելապէս հիացրեց յայտնի արևելագէտներից շատերին: Ինչ վերաբերում է գիտական ոյժերին, որոնց կը յանձնվի շահը, ես կատարելապէս գոհ եմ: Նրանք գեղեցիկ կրթութիւն կը տան նրան և կը դաստիարակեն նրա մէջ հէնց այնպիսի միապետ, որպիսին հարկաւոր է նոր կառավարութեանը:

(«Бирж. Вѣд.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅՈՑ ԾԽ.-ԵԿ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև առաջ ենք բերում մեր ծխ. դպրոցների մասին կազմված այն նոր հրահանգը, որի մասին հաղորդեցինք «Մշակի» երէկվայ համարում (№ 193) և որ կաթ. տեղապահ Սուրէնեան արքեպիսկոպոսը ուղարկել է ռուսահայոց թեմ. առաջնորդներին, որպէսզի այդ նոր մշակված հրահանգով ղեկավարվեն նրանք իրանց թեմերում գտնված ծխ. դպրոցների վերաբերմամբ:

Առաջիկայ ուսումնական տարվայ վերահաս սկզբնաւորութեան առիթով, պարտք ենք համարում՝ ըստ բարձր հրամանի Նորին Վեհափառութեան՝ յիշեցնել ձեր գերաշնորհութեանը մեր ծխական դպրոցների կառավարութեան համար ներկայումս գոյութիւն ունեցող պարտադիր օրինական և կանօնական կարգերը: Անկատարութիւնները ու անկարգութիւնները, որ նկատելի են մեր եկեղեցական-ծխական դպրոցների գործում, ծագում են ոչ թէ անհրաժեշտ պարտադիր կարգ ու կանօնի բացակայութիւնից, այլ այդ պատշաճաւոր օրէնքների թերի և անփոյթ գործադրումից, երբեմն նոյն իսկ անուշադիր թողնվելուց:

Ուստի կը հրաւիրենք ձեր գերաշնորհութիւնը, որ ի պաշտօնէ ընդհանուր հսկողն ու պահանջողը պիտի լինիք թեմում ամենայն օրինաւորութեան և կարգապահութեան թէ առհասարակ և թէ առանձնապէս ծխական դպրոցաց վերաբերմամբ, որպէս զի ուշք դարձնէք անյապաղ առնելու այն բոլոր միջոցները և կարգադրութիւնները, որոնք անհրաժեշտ են տիրող օրէնքների և կանօնների գծած պարտադիր շաւղի մէջ պահելու և վարելու թեմումդ դպրոցական պատասխանատու գործը՝ համեմատ օրինաց հաւաքածուի XI հատ. I մասի 1178-րդ յօդուածի, 1874 թւի յուլիսի 19-ի կայսերահաստատ կանօնների, 1905 ամի օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրովարտակի Կովկասի Տ. Փոխարքայի հաստատած ժամանակաւոր կանօնների և Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսների հայրապետական նոյնիմաստ սրբատառ կոնդակների:

Հայոց հանրակրթական դպրոցներն եկեղեցիներին և վանքերին կից՝ գտնվում են ընդ վերին իշխանութեամբ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց և բացվում են յատուկ կոնդակով միջնորդութեամբ թեմական առաջնորդի:

Իւրաքանչիւր բացված դպրոցի մասին առաջնորդը պարտ է անմիջապէս տեղեկացնել մարմնաւոր պատշաճաւոր իշխանութեանը: Իւրաքանչիւր դպրոցի ընթացիկ գործերի անմիջական կառավարութիւնը յանձնված է ծխական հոգաբարձութեանը, տեսչին և կամ աւագ ուսուցչին (սա հաստատվում է թեմական իշխանութիւնից ծխական հոգաբարձութեան առաջարկութեամբ) և մանկավարժական խորհրդին, որը կազմվում է նոյն դպրոցի բոլոր ուսուցիչներից տեսչի և կամ աւագ ուսուցչի նախագահութեամբ:

Ծխական հոգաբարձութիւնը ընտրվում է ծխական ժողովում և հաստատվում է թեմական առաջնորդի գրութեամբ ըստ որոշման թեմ. խորհրդի, որի նախագահն է առաջնորդը: Ծխական հոգաբարձութեանը անդամակցում է երէցփոխը, իսկ դպրոցի վերաբերեալ նիւթերին մասնակցում է դպրոցի տեսուչը և կամ աւագ ուսուցիչը ձայնի իրաւունքով: (Տես Փոխարքայի ժամ. կանօններ յօդ. 1, 2, 3):

Ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է հոգալ դպրոցի տնտեսականը, պատրաստել դպրոցի անցած ուսումնական տարվայ տեղեկագիրը և տնտեսական հաշիւը, վաղօրօք մշակել դպրոցի յաջորդ ուսումնական տարվայ ելևմտից նախահաշիւը և ծխական ժողովի հաւանութեամբ ներկայացնել թեմական իշխանութեանը ի հաստատութիւն:

Եթէ եկեղեցական և այլ եկամուտները բաւարարութիւն տալու չը լինեն դպրոցի բոլոր կարիքները հոգալու, հոգաբարձութիւնը առաջադրութիւն է անում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ, այդ տուրքը կարող չէ լինել միանուագ կամ մշտական, դրամով կամ իրեղէնով: Այդ առաջադրութիւնը առաջարկվում է ծխականների ընդհանուր ժողովի քննութեանը և նրա կողմից ընդունվելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ դառնում պարտաւորական համաձայնութիւն յայտնողների համար: (Կով. Փոխ. ժամ. կանօնների յօդ. 5):

Ուսուցիչներին ընտրում է ծխական հոգաբարձութիւնը տեսչի կամ աւագ ուսուցչի առաջարկութեամբ և ծանուցանում է ի գիտութիւն թեմական իշխանութեանը: Մանկավարժական խորհուրդը կարգադրում և տնօրինում է դպրոցի վիճակը ըստ ուսումնականին, և ուսումնական տարվայ վերջին կազմում է դպրոցի տարեկան ուսումնական տեղեկագիրը և ներկայացնում ծխական հոգաբարձութեանը և թեմական իշխանութեանը:

Տեսուչը և կամ աւագ-ուսուցիչը հսկում է դպրոցի կարգապահութեանը, ուսումնական ծրագրի և մանկավարժական խորհրդի որոշումների անթերի գործադրութեանը: Թեմի բոլոր ծխական և վանական դպրոցների բարգաւաճման վրա հոգ է տանում և հսկում է թեմական իշխանութիւնը թէ վարչական, թէ ուսումնական և թէ տնտեսական կողմից: Առաջնորդը թեմի ծխական և վանական դպրոցների գործերը ղեկավարում է իբրև նախագահ թեմ. խորհրդի, որի անդամները, թւով 4—6 հոգի, ընտրվում են թեմ. պատգամաւորների ժողովի կողմից և հաստատվում են Վեհափառ Կաթողիկոսից Տ. Փոխարքայի կանօնների ը. մասի իմաստին կամ ոգուն համաձայն:

Թեմ. խորհուրդը հաստատում է ծխ. հոգաբարձութիւնից, ծխ. դպրոցների տեսուչներին և կամ աւագ-ուսուցիչներին, քննում է և հաստատում է ծխ. հոգաբարձուների և մանկավարժական խորհուրդների ներկայացրած տեղեկագրերը, հաշիւներն և ելևմտական նախահաշիւները, քննում է և լուծում է դպրոցական մարմինների և պաշտօնեաների տարաձայնութիւններն ու բողոքները, ինչպէս և այս մարմինների և պաշտօնեաների դէմ յարուցված բողոքները, ամեն տարի կազմում է միամեայ ուսումնական և տնտեսական տեղեկագիր թեմի բոլոր դպրոցների համար և ներկայացնում Վեհ. Կաթողիկոսին. ընտրում է Վեհ. Կաթողիկոսի հաստատութեամբ մի կամ մի քանի թեմական տեսուչներ թեմի ծխական և վանական դպրոցներին վերահսկելու և պարբերաբար թեմ. խորհրդին զեկուցանելու համար:

Հարկ է առանց ուշացնելու փութալ թեմ. տեսուչներ կարգելու ողջամիտ և ձեռնհաս անձերից, հոգալով նրանց իբրև կրթական պաշտօնեաների տարեկան ռոճիկը ծխական միջոցներից: Դպրոցական կառավարութիւնը թեմումդ անսայթաք և հաստատուն օրինական եղանակով առաջ տանելու գործում անկախ ներկայ բացատրական հրահանգութիւնից դիմեցէք լրացուցիչ մեկնութիւններ և ցուցումներ ստանալու համար Նորին Վեհափառութեանը, և կը տրվեն ձեզ մեկնութիւններ և ցուցումներ կենտրոնական ուսումնական խորհրդի կողմից, որը վերակազմվելու է ընդ անմիջական հսկողութեամբ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Ի վերջոյ պէտք է գիտենալ, որ օրէնքների և կանօնների ճիշդ և անթերի գործադրութեամբ և հետևողականութեամբ են կենդանանում և բարգաւաճում հասարակաց հաստատութիւնները, որոնց ենթարկված են և մեր դպրոցական հիմնարկութիւնները: Յատուկ ուշադրութիւն դարձնել, որ տեսուչները, ուսուցիչները և դաստիարակները լինեն պետական հպատակ, օրինասէր և խղճմիտ անձինք լինեն, ուսանողները քրիստոնէական ոգով և բարոյական դաստիարակութեամբ զարգանան և ուսման ու գիտութեան հետ հայերէն ու ռուսերէն լեզուներն ու պատմութիւնը և այլն համահաւասար աստիճանով ուսանեն (1874 թ. կայսերահաստատ կանօնները): Լիայոյս ենք, որ թեմ. իշխանութեան գիտակցական գործունէութեամբ առաջիկայ ուսումն. տարվանից ուսումնարանական կեանքն ու գործունէութիւնն ընթանալու են աւելի բարեկարգ ու արդիւնաւէտ ճանապարհով ի պայծառութիւն Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, ի յառաջադիմութիւն ուսումնասէր մանկտւոյն հայոց և ի բարգաւաճումն երկրին և հայրենեաց, ի միաբանութիւն և ի գոհունակութիւն ազգիս Վեհ. Հայրապետին:

Տեղակալ՝ Գէորգ արքեպիսկոպոս

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախլաթեան գիւղ (Սիսիան), 25 օգ.

Մեզանում հունձը վերջացած է, իսկ կալսելը վերջանալու վրա է. հացահատիկները այս տարի մեզանում նախանձելի են. թէ մեր և թէ շրջակայքի գիւղացիք այս տարի կարող են ազատ շնչել:

Շուտով պէտք է սկսվի դասաւանդութիւնը, [illegible] կանոնաւոր ուսումնարան չունենք: Դպրոցի հին շէնքը թէ փոքր էր և թէ տեղն էր անյարմար: Այդ պատճառով, անցեալ տարի տեղափոխվեց և գիւղից փոքր ինչ հեռու շինվեց ուսումնարանի շինութիւնը, որը, շնորհիւ մի քանի մարդկանց չկամութեան, դեռ մնում է թերի: Այսպիսի պայմաններում այս տարի հազիւ թէ մեր մանուկ սերունդը կարողանայ ուսումնարան յաճախել: Լսում ենք, որ ուրիշ գիւղերում ուսումը դանդաղ է գնում շնորհիւ «աղա» հոգաբարձուների. բայց մեզանում ընդհակառակն է. ոչ թէ ուսումը խանգարողը աղա-հոգաբարձուներն են, այլ ժողովրդի այն մասը, որը ուսման, լուսաւորութեան, քաղաքավարութեան մասին լսելիս՝ երես է թեքում, առարկելով թէ «լուսաւոր մարդիկ աշխատաւոր չեն լինում, իրանց մեծերի պատիւը չեն պահում, համարձակ են լինում»:

Մեր գիւղը զրկված է ամեն բարիքից: Լսում և կարդում ենք լրագիրներում, որ ուրիշ գաւառներում ու վայրերում դասախօսութիւններ են տեղի ունենում անոյնա-

---

Այսպէս էր պատմութիւնը:

Լսեցինք բոլորս, լսեց և կառապանը. բայց նա չը համոզվեց:

Մենք անցնում էինք արտերի, այգիների մօտով: Ցորենն ու գարին արդէն հնձված էին, մնում էին սիմինդրի արտերը:

Ածխուրեցին պատմում էր իրանց տնտեսութեան մասին և ասում էր, որ թէև հացը առատ է այս տարի, բայց խոտ ու դարմանը թանգ են լինելու:

— Երաշտը վնասեց խոտահարքերին,—բացատրեց նա:

Մեզ հետ նստած ախալցխացի մի հրեայ պատմում էր, որ նա էժան ձեռք էր բերել հարիւր հատ գառն, տարել էր նրանց Զիատուր և ծախել էր օգուտով՝ զոյգը եօթ րուբլով. իսկ այնտեղ միսը ծախվում է 15 կոպէկով ֆունտը:

Միւս խօսակիցները պատմեցին, որ խոտի սակաւութեան պատճառով գիւղացիները սկսել են ծախել իրանց անասուններին, և ընկել է սրանց գինը:

Ճանապարհին պատահում էինք բազմաթիւ վերադարձող ամարանոցականների, որոնք շտապում էին դէպի երկաթուղու կայարանը ամեն տեսակ կառքերով և սայլերով:

— Մի երկու շաբաթից յետոյ,—ասում էին ուղեկիցներս,—սաստիկ կը թուլանայ երթևեկութիւնը և Ախալցխայի շուկան կը կորցնի իր ներկայ կենդանութիւնը:

Ախալցխա մտնելուց, իբրև առաջին նորութիւն, աչքի են ընկնում նոր հիմնված մեքենայական սղոցարանները: Նրանք պատրաստում են տախտակներ, որոնց մի մասը արտահանվում է գաւառից, մասը սպառվում է քաղաքում և գիւղերում:

Ախալցխայում թէև կառուցվել են մի քանի լաւ տներ, աւելացել է բուսականութիւնը և մշակվել են մի քանի նոր այգիներ ու հաստատվել մի երկու ձեռնարկութիւն, բայց ընդհանրապէս քաղաքը շատ առաջ չէ գնացել:

Հասնելով Ախալցխա՝ ես նախ նուիրեցի ինձ մասնագիտական գործերին, խորհրդակցելով անասնաբոյժների և հողաչափի հետ մի քանի վարչական-տնտեսական խնդիրների մասին, ապա զբաղվեցի ուրիշ ինձ հետաքրքրող գործերով:

Եւ Ախալցխայի գաւառն ունի հետաքրքրութեան տարրեր:

Նա տալիս է մեծ քանակութեամբ մրգեր, որոնց մի նշանաւոր մասը արտահանվում է:

Նա ունի մեծատարած անտառներ և իւրաքանչիւր տարի արտահանում է մեծ քանակութեամբ փայտեղէն դէպի Թիֆլիս և ուրիշ տեղեր:

Նա ունի արհեստաւորների մեծ թիւ, որոնց պատրաստած արդիւնքների մէջ կան նուրբ և գեղեցիկ նմուշներ:

Նա ունի զանազան տեղերում հանքային ջրեր, որոնցից նշանաւորներն են Աբաստումանը և Ուրավելը:

Նա նոյն իսկ արել է գիւղատնտեսական կատարելագործութիւնների մի քանի նոր փորձեր, օրինակ Դիլիսկում, Ծուրղութում:

Ախալցխան, իբրև գաւառի կենտրոն, կարող էր աւելի մեծ դեր կատարել, քան նա կատարում է, եթէ ընդարձակ նախաձեռնութեան, ղեկավարող և կազմակերպչական ոգու տէր մարդիկ շատ լինէին այնտեղ: Ոյժեր պակասում են:

Այդ քաղաքում և այդ գաւառում գործ կայ կատարելու:

Ախալցխայում տեսնվեցի նախկին ծանօթ բժիշկ Այվազեանցի հետ, որ առաջին Պետական Դումայի պատգամաւոր էր:

Բժշկի հետ գնացի այցելելու՝ դպրոցները:

Տղայոց Կարապետեան դպրոցը ներկայումս ունի հնգամեայ դասընթացք, զետեղված է սեփական շինութեան մէջ քաղաքային այգու մօտերքում:

Վերի յարկում, ուր գտնվում է հանդիսաւոր դահլիճը, յարմարեցված է մի բեմ թատրոնական ներկայացումների համար:

Բեմը բաժանված է դահլիճից շարժական տախտակներով, որոնք հանվում են ներկայացումների ժամանակ:

Ներկայացումներ տրվում են թէ այստեղ և թէ ձմերային կլուբի դահլիճում:

Դասարանները մեծ մասամբ լուսաւոր են և բաւականաչափ օդ ունեն, բայց կայ մէկը, որ պակասաւոր է լոյսի և ջերմութեան կողմից: Դպրոցի վարչութիւնը փորձեր է անում բարեփոխել դասարանների շինութիւնը և նրանց դասաւորութիւնը:

— Դպրոց մտնել ցանկացողները շատ շատ են,—բացատրում էին ինձ,—բայց տեղ քիչ է: Անցեալ տարիները այնքան մեծ նեղութիւն չէր նկատվում, որովհետև դասարանների թիւը քիչ էր, չը կային բարձր դասարաններ, բայց այժմ, երբ նախկին աշակերտները անցնում են հետևեալ դասարանները, ստիպված ենք սահմանափակել մտնողների թիւը:

Նոյնը Եղիսաբէթեան օրիորդական դպրոցում, ուր հազիւ հարիւր հոգու տեղ կայ, իսկ ցանկացողների թիւը հասնում է մօտ հարիւր յիսունի:

Օրիորդական դպրոցը համեմատաբար աւելի անբաւարար դասարաններ ունի, քան Կարապետեանը: Մտադրութիւն կայ նոր շէնք կառուցանել դպրոցի համար:

Ազատ տեղ շատ կայ և կարելի է ընդարձակ շինութիւններ կառուցանել:

— Իսկ որևէ հոգատարութիւն արվում է այն սերնդի համար, որ անգրագէտ մնաց դպրոցների փակման տարիներում,—հարցրի ես:

— Այստեղ փորձ եղաւ բանալու հասակաւորների համար գրագիտութեան դասընթացքներ և նրանք համակրութիւն գտան: Միտք կայ կազմակերպելու այդ գործը առաջիկայում:

Այցելեցի և այն փոքրիկ թանգարանը, որ գտնվում է Ամենափրկիչ եկեղեցու խորանում:

Մեծ չէ թանգարանը, հաւաքածուի մէջ կան հետաքրքրական իրեր: Աչքի են ընկնում ձեռագործ թագեր, գոգնոցներ, մագաղաթեայ ձեռագիրներ, եկեղեցական անօթներ: Կան քանդակագործութեան նմուշներ: Անկատար և տգեղ նկարների կողքին դուք տեսնում էք նուրբ և գեղեցիկ գծագրութիւններ:

Բժշկի հետ այցելեցի և քաղաքային հիւանդանոցը:

Նա մեծ չէ և հազիւ կարողանում է բաւարարութիւն տալ անհրաժեշտ պահանջին:

Ես հետաքրքրվեցի Ախալցխայի առողջական դրութիւնով:

Բժիշկը թւեց մի քանի հիւանդութիւններ: Դուրս եկաւ, որ կրծքի հիւանդութիւնը աննշան տեղ չէ բռնում հիւանդութիւնների ցուցակում:

— Ինչո՞վ բացատրել այդ հանգամանքը,—հարցրի ես,—որովհետև Ախալցխան լաւ օդ ունի:

— Գուցէ ներկայ դէպքում,—ասաց բժիշկը,—դեր է խաղում այն հանգամանքը, որ Աբաստուման եկող հիւանդները ազդել են, որովհետև ախալցխացիներից շատերը գնում են Աբաստուման և մնում ամիսներով:

Ես ցանկութիւն ունէի մի զրոյց ունենալ Ախալցխայի գործողների հետ զանազան ընթացիկ խնդիրների մասին: Պայմանաւորվեցինք բժշկի հետ, որ այդ կիրագործենք հետևեալ օրը, կիրակի, երեկոյեան:

Իսկ մինչ այն՝ ես վճռեցի այցելել Ծուրղութ գիւղը:

(Վերջը միւս անգամ)

Ա. Քալանթար

գործութեան, անասնապահութեան, կաթնատնտեսութեան և երկրագործութեան մասին, բայց մեր շրջանը բոլորովին մոռացված է այդ կողմից:

Շրջանիս մի քանի գիւղերում երևացել են զանազան հիւանդութիւններ: Մարդկային զոհեր եղել են: Մեզանում բժշկականութիւնը բացակայում է: Գաբօ

Շուշի, 28 օգոստոսի

Մօտաւորապէս 1 ամսից յետոյ Շուշում պէտք է կատարվեն քաղ. ձայնաւորների և քաղաքագլխի ընտրութիւնները: Որպէս մամուլի գաւառական աշխատակից, մեր սրբազան պարտքն ենք համարում վաղօրօք մեր քաղաքացիների ականջներին թըմբուկ զարնել քնածութիւնից նրանց սթափեցնելու համար: Ընտրողական սկզբունքն անկասկած մի գեղեցիկ բան է: Սա մի իրաւունք է, մի արտօնութիւն, որով մենք պէտք է պարծենայինք անշուշտ, եթէ ճըշմարիտ գիտակցութիւն ունենայինք: Բայց մենք ոչ թէ չենք պարծենում, օգտվում այդ արտօնութեամբ, այլ արհամարհում ենք դրան: Արհամարհում ենք մեր սառնասըրտութեամբ և մեր անպարտաճանաչութեամբ: Քաղ. օրէնսդրութեան հիման վրա՝ քաղաքի ընդհանուր տնտեսական կառավարութիւնը կենտրոնացած է քաղ. իրաւատուների ձեռքում, իսկ վերջիններիս ընտրողը հասարակութիւնն է: Եթէ այսօր մեզանից ամեն մէկը գրեթէ ամենայն օր ականատես վկայ է ամեն տեսակ ախտի, աւերող պարագաների, անտարակոյս դրա պատճառը ոչ թէ քաղ. վարչութիւնն է, ինչպէս սովոր ենք վերագրել, այլ ինքը հասարակութիւնը: Հասարակութիւնը երբեք իրաւունք չունի քունը ու պուճախում տրտնջալու, գանգատվելու, որ քաղ. վարչութիւնը և քաղաքագլուխը ոչինչ չեն շինում, ոչ մի արդիւնք չեն ցոյց տալիս, որ քաղաքի գործերի այժմեան վիճակը անասելի կերպով խճճված է, որ անյարմար են իրանց պաշտօնին և այլն և այլն, քանի որ ինքը հասարակութիւնը գիտակ քայլերով, խղճով ու խելքով չէ մերձեցել իրաւատուների ընտրութեանը, քանի որ ինքը չէ տուել այնպիսի իրաւատուներ և քաղաքագլուխ, որոնք ընդունակ լինէին համայնքի ընդհանուր շահերին նուիրված գործել և ինքնավարութեան բարիքները տալ քաղաքին: Ինքնավարութեան սկզբունքը՝ քաղաքին բարօրութիւն տալն է. այդ իսկ պատճառով Շուշու հասարակութեանը մընում է այս մի ամսվայ ընթացքում լրջօրէն նախապատրաստվել ընտրութիւնների համար: Քաղաքի ինտելիգենտ դասակարգի պարտաւորութիւնն է՝ նոյն իսկ ընտրողական բացարձակ պայքարի միջոցով նախապատրաստել ընտրողներին: Թէ ինչպիսի անձերից կը բաղկանայ յետագայ քաղաքային ամբողջ վարչութիւնը, այդ՝ մօտիկ ապագան ցոյց կը տայ: Միայն առաջիկայ ընտրութիւնների ժամանակ՝ մենք շուշեցիներին ցանկանում ենք գիտակցութիւն, որպէս զի ջերմ կերպով մասնակցէ ընտրողական ագիտացիայի մէջ, և բարեխիղճ ընտրութիւններ անելով նպաստէ մեր բազմաչարչար քաղաքի ներքին առաջադիմութեան: Պօղ. Զաքարեան

Արմաւիր, 29 օգոստոսի

Ամսիս 28-ին, երեկոյեան ժամը 5-ին, Մուրատչայեվի և Նազարովի ծխախոտի գործարանի մթերանոցում մեծ հրդեհ սկսվեց, որը տևեց մինչև առաւօտ: Այրվեց 2000 հակ ծխախոտ, մօտ 7000 պուդ: Չը նայած գործ դրած ջանքերին, հրդեհը չը կարողացան շուտով հանգցնել, որովհետև, համարեա թէ ջուր չը կար:

Գործարանների մեծ մասը գտնվում է երկաթուղու գծի այն կողմը, և այդ մասը աւանից աւելի բարձր լինելով ջուրը կանոնաւոր կերպով չէ մատակարարվում, այնպէս որ ամեն օր 2—3 ժամ ջրանցքի խողովակները կանգնում են: Շատ պարզ է, որ ջրաբաշխական մեքենաներն անզօր և անպէտք են Արմաւիրի մեծ բնակչութեան համար, և չը նայած մի քանի դիմումների, որ արվել է ջրի էքսպլօատատորներին՝ մեքենաները փոխելու, այդ դիմումները մնացել են անհետևանք: Գուցէ տարօրինակ կը թւայ այդ բանը, թէ միթէ գիւղական կառավարութիւնը պայման չունի կապած ջրի էքսպլօատատորների հետ: Պայմանը կայ, և ահա դրա պատմութիւնը:

Եօթը տարի առաջ մի քանի մասնաւոր անձինք դիմում են գիւղական կառավարութեանը, առաջարկելով ջրի մատակարարութիւն. գիւղական կառավարիչներն էլ, որոնք սկզբից մինչև այժմ էլ եղել են գործից անտեղեակ անձնաւորութիւններ, ոտով, գլխով բռնում են այդ իրանց բարերարներին և աղաչում, պաղատում, որ իրանց գիւղին մի այդպիսի բարերարութիւն անեն: Ճարպիկ էքսպլօատատորները, օգտվելով նրանց ագիտութիւնից, երեսուն տարով պայման են կապում, այնպիսի պայման, որ գիւղական կառավարութեան այժմեան իրաւացի պահանջները յօդս են ցնդվում:

Բնակչութիւնը տարէ-տարի մեծանում է, կարիքները մնում են նոյնը: Հարկաւոր է մեծացնել ջրամբարները, հարկաւոր են աւելի զօրեղ ջրմուղ մեքենաներ, իսկ էքսպլօատատորները հաշիւ չունեն նոր ծախսեր անելու, նամանաւանդ որ պայմանը շատ ճարպիկ կերպով է կազմված:

Հրդեհի ժամանակ գիւղի բոլոր կրանները կողպել էին, որպէսզի ջուրը հանի գործարանների մասը, բայց այնուամենայնիւ ջուր չը կար: Հետաքրքրական է՝ ինչ կանէին, եթէ, միևնոյն ժամանակ, մի ուրիշ հրդեհ առաջանար բուն քաղաքում, մանաւանդ որ այստեղի քամիները շատ նպաստում են հրդեհներին և, եթէ սկսում են փչել, շաբաթներով չեն դադարում:

Սա մի լաւ խրատ է գիւղական հասարակութեան, որը սովորել է գիւղական կառավարութիւն ուղարկել ծերունի ու երկարամորուս տգէտ անձնաւորութիւններ, որոնց իսկական գործն է պատերի տակ նստելը իրանց չիբուխներով և կողքերին թքելը: Հարկաւոր է վերոյիշեալի նման գործերը յանձնել աւելի գիտակ անձնաւորութիւնների:

Գիւղը մեծ կարիքներ ունի. օրինակ՝ փողոցների մեծ մասը սալայատակված չէ ու չէ ջրվում: Բացի գլխաւոր փողոցից լուսաւորութիւնը վատ է և, չը նայած այդ մեծ կարիքներին, գիւղական կառավարութիւնը նոր զբօսարաններ է շինում, բաւական չը համարելով հինը, որ աչքաթող է արված և ուր այժմ միայն կովերն են յաճախում: Ալ. Եգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ սեպտեմբերին կրկին Պետերբուրգ է գնալու Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ:

◆ Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվ կը վերադառնայ Թիֆլիս հոկտեմբերի 9-ին կամ 10-ին:

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման կարգադիր յանձնաժողովի մի քանի պատուէրները կատարել տալու համար Թիֆլիս է եկել Խորէն վարդապետ Մուրադբէկեանը:

◆ Թիւրքաց հիւպատոսի կարգադրութեամբ, Կարսում սրանից յետոյ Ռուսաստանից Թիւրքիա գաղթող հայերից պէտք է առնվի անցաթղթային տուրք ամեն մի մարդուց 2 ր. 20 կ. փոխարէն 1 ր. 80 կ.: Սակայն գաղթողներն իրաւունք են ստանում ձրիաբար անցկացնել անասուններ, եթէ կը ներկայացնեն անասնաբոյժի վկայականը, որ անասունը ոչ մի հիւանդութեամբ վարակված չէ:

◆ Թէօդօսիայից «Бирж. Вѣд.» լրագրին գրում են. «Թէօդօսիայի հայ-կաթօլիկ եկեղեցու վանահայր հ. Գրիգոր Սափարեանը ուղևորվեց Հռոմ՝ միջնորդելու համար, որ նրան նշանակեն Թիֆլիսում նոր հիմնվող հայ-կաթօլիկ թեմի եպիսկոպոս»:

◆ Մեզ խնդրում են հաղորդել, որ Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ վարդապետը Էջմիածին է եկել ոչ թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ, այլ ինքը հայր-սուրբը տուել է յայտարարութիւն Նորին Սրբութեան անունով, իսկ Վեհափառը իր հաճութիւնն է տուել նրա գալստեան վերաբերութեամբ:

◆ Էջմիածնից տեղեկացնում են, որ հիմք չունեն այն լուրերը, թէ որոշ մարդիկ փորձեր են անում հեռացնելու Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին իր այժմեան պաշտօնից և նրա տեղ նշանակել տալու Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանին:

◆ Կ. Պօլսից այս օրերս Թիֆլիս է եկել Յովսէփ Գույումճեան, որ նշանակված է Վանի կենտրոնական վարժարանի տնօրէն և այս օրերս պէտք է մեկնէ իր պաշտօնատեղին:

◆ Վաղը, շաբաթ, երեկոյեան, վրաց ազնուականութեան թատրօնում ժողովրդական համալսարանի նախաձեռնութեամբ Նիկօլայ Ալ. Մօրօզօվը կը կարդայ դասախօսութիւն «Ի խոյզ փիլիսոփայական վէմի» վերնագրով, որ կը լինի ժողովրդականացրած պատկերներ հին և նոր ժամանակի գիտական հետախուզութիւններից: Դասախօսը կը խօսէ ալքիմիկոսների և կենսական էլեքսիրի մասին, ալքիմիայի մասին միջին դարերում և մետաղների վերափոխման հնարաւորութեան մասին: Ապա նա կը խօսէ ռադիի և նրա զարմանալի յատկութիւնների մասին իբրև մի նոր ույժ, որ խոստանում է մեզ իրագործել ալքիմիկոսների անուրջները:

◆ Այսօր, ուրբաթ, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային Զուբալովեան ժողովրդական տանը պիտի կայանայ մի համակրելի համերգ յօգուտ Մետեխի բանտի գրադարանի: Այդ գրադարանը շատ աննախանձելի դրութեան մէջ էր, և վերջին ժամանակներս առանձին ջանքեր են գործ դըրվում նրան հարստացնելու, որպէսզի բանտարկեալներին մտաւոր պաշար տրվի: Հայկական և վրացական մասերը բոլորովին աղքատ են: Այսօրվայ համերգով, հաւանական է, զգալի զարկ կը տրվի այդ բացը ծածկելու համար. ուստի յորդորում ենք մեր համերգասէր հասարակութեանը չը վլանալ իր կօպէկները այդ նպատակին ծառայեցնել, առաւել ևս, յուսով ենք, որ տ. Նաւասարդեանի, պ. պ. Ամիրջանի, Դաւթեանի և ուրիշների մասնակցութիւնն առանձին փայլ կը տայ այդ համերգին:

◆ Արհեստաւորների աւագի օգնական ընտրվել է Մ. Մ. Ռաֆայէլեանը, որ ստացաւ 51 սպիտակ և 43 սև քուէ:

◆ Վրաց սեմինարիան նոր շինութիւն անցնելուց յետոյ, հին շինութեան եկեղեցին Պուշկինեան փողոցում վերացվեց: Վերջին անգամ աստուածպաշտութիւնը այդ եկեղեցում կատարվեց օգոստոսի 30-ին, որից յետոյ բոլոր սրբապատկերները և եկեղեցական անօթներն ու զարդարանքները ամփոփվեցին նոր եկեղեցին: Հին եկեղեցու պատարագի սեղանը այրելու են:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պատրաստել և դումային է ներկայացնելու մի զեկուցում այն մասին, որ քաղաքի լրացուցիչ նախահաշուի մէջ մտցվի 108,310 ր., նոր կազմով ոստիկանութեան պահպանման համար հետևեալ կիսամեակում:

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրել է խաղալ Կովկասի բեմերի վրա թուրքերէն 5 գործ. «Լօլիլար» (Մեռեալներ) պիէսը, հեղ. Ջալիլ-Մահմէդ-Կուլի-զադէի:

◆ Ստացանք Կար. Միրիմանեանի և Աշ. Թումանեանի կազմած «Քաղաքակրթութեան տարերքը և հայկական առասպելներ», 43 նկարով և 1 քարտէզով: 140 էջ, գ. 55 կօպէկ:

◆ Ղըշլաղից մեզ գրում են, որ օգոստոսի 30-ին, օրվայ ժամը 3-ին, երկինքը ծածկվել է սև ամպերով ու փոթորիկ բարձրացել և ապա մի ժամվայ չափ սաստիկ անձրև տեղացել՝ առաջացնելով մեծ հեղեղ, որից քանդվել են երկաթուղու մի քանի փոքրիկ կամրջակներ: Վնասվել է նոյնպէս և գիւղի հիւսիսակողմը, սարալանջի վրա գտնվող թուրքական դեռ չը հնձված արտերի մեծ մասը: Ամբողջ ամառվայ ընթացքում այսպիսի հեղեղ չէր տեսել Ղըշլաղի շրջակայքը:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Սեպտ. 2-ին, ցերեկվայ ժամը 1½-ին, Սիօնի փողոցում, Աֆրիկեանի քարվանսարայի մօտերը, 2 անյայտ չարագործներ պահեստի ոստիկան Յ. Արուշանեանի վրա, որ ծառայում է «Աֆրիկեան» առևտրական տանը, կրակեցին մի քանի անգամ: Վիրաւորված Արուշանեանին տարան Միքայէլեան հիւանդանոցը: Բացի Արուշանեանից կրակելու ժամանակ վիրաւորվեց աջ ձեռքից Գօրու գաւառի Թացմինդա գիւղի բնակիչ Կոնստանդին Ջաչանաձէն, 19 տարեկան, որին բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ արձակեցին տուն: Չարագործները իրանց գործը կատարելուց յետոյ անյայտացան: 5-րդ քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաները իսկոյն շրջապատեցին դէպքի տեղը, որով Կօլօկոլնի նրբափողոցում ձերբակալվեց ոմն Անդրէյ Օքրուաշվիլի, 25 տարեկան, արհեստով դերձակ, իսկ Բուժէյնի նրբափողոցում Կ. Հ. Բ. Ընկերութեան տան մէջ, արտաքնոցում թաքնված, ձերբակալվեց ուրիշ անյայտ ոմն, որ իրան անուանեց պարսկահպատակ Արսէն Խաչատուրեան, 19 տարեկան, արհեստով կօշկակար: Ձերբակալվածների մօտ զէնք չը գտնվեց: Բացի այս 2 անձերից, ձերբակալվեցին նաև կասկածով պարսկահպատակ Բ. Մովսէսեան, 19 տ., որ չունի որոշ պարապմունք և մասնակցել է Պարսկաստանի յեղափոխական շարժման Սաթթար-խանի խմբում, և Նախիջ. գաւ. բնակիչ Արամ Միքայէլեան, 20 տ., նոյնպէս անորոշ պարապմունքի: Բռնվածներից Օքրուաշվիլուն ճանաչեցին, որ կրակում էր Արուշանեանի վրա:

◆ Սեպտ. 2-ին Դաւիդօվսկայա փող. քաղաքապահ ոստիկանի ձեռքով ձերբակալվեց թիւրքահպատակ Մովսէս Կարապետեանը, որի մօտ գտնվեցին նագան սիստեմի ատրճանակ 22 փամփուշտով: Ձերբակալվածը թոյլատրող վկայական չունի:

◆ Սեպտ. 3-ին կախաղան հանվեց Կոնստանտին Լասէևը, որին զինուորական-նահանգական դատարանը դատապարտել էր մահվան պատժի 1907 թ. յունվ. 7-ին ոստիկան Կորչմառովին և կօզակ Օպրիչկօյին սպանելու համար:

◆ Սեպտեմբ. 2-ին II քաղաքամասում զինուոր-պահակները ոստիկանների հետ շուրջկալ կատարեցին, որի ժամանակ ձերբակալվեցին անցաթուղթ չունեցող և պարապ 13 մարդիկ. նոյն օրը X քաղաքամասում ձերբակալվեցին 6 հոգի:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքից գրում են Կ. Պօլսի «Հայրենիքին», որ Եգիպտոսում գտնվող օսմանցիները տօնել են օսմ. սահմանադրութեան տարեդարձը: Այդ հանդէսի օրը, որին ոչ մի հայ չէ մասնակցել՝ հակառակ գրաւոր հրաւէրների, տեղական ֆրանսերէն թերթերը տպել են եգիպտահայերի առաջնորդարանի պաշտօնական մի զեկուցումը, որով ծանուցվում էր հասարակութեան, թէ այդ կիրակի օրը Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկ. պիտի պատարագէ օսմ. ազատութեան յաղթանակի համար զոհված հայ նահատակների հոգու համար, իսկ պատարագից յետոյ հոգեհանգիստ պիտի կատարվի կիլիկեան զոհերի համար:

Այդ օրը եկեղեցին լիքն էր խուռն բազմութեամբ, որի նմանը հազիւ թէ երբևէ տեսած լինէր Աղեքսանդրիայի հայոց եկեղեցին: Այդտեղ էին ժողովրդի բոլոր դասակարգի ներկայացուցիչները:

Հոգեհանգստից անմիջապէս յետոյ սկսվեց Կիլիկիայի ջարդերի միջոցին ընկնող հայերի յիշատակին նուիրված սգահանդէսը, որ բացվեց առաջնորդ Մկ. ծ. վ. Ազատեանցի մի հակիրճ ճառով, որի վերջում բանախօսը հանգիստ մաղթեց նահատակների հոգուն և շեշտեց նրանց որբերին օգնելու անհրաժեշտ կարիքը. նա ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր նրանց, որոնք հէնց կիլիկեան հողի վրա օգնութիւն հասցրին դժբաղդացած հայերին, փրկելով վերջինների կեանքը:

Առաջնորդից յետոյ խօսեց հայ-բողոքականների յայտնի քարոզիչ Ճէճիզեան: Նրա՝ ժողովրդին ուղղած խօսքերն այնքան տաք ու սրտագին էին, որ ունկնդիրներից շատերի աչքերում արցունք էր երևում ի լուր Ադանայի խժդժութեանց նկարագրութիւնների:

Ի վերջոյ բեմ բարձրացաւ Մուշեղ եպիսկ. և, սգահանդէսի նպատակը պարզելուց յետոյ, ցոյց տուեց վերջին կոտորածների առաջացրած ահեղ պարապը, ժողովրդի քայքայված դրութիւնը:

Սգահանդէսի ընթացքում, առաջնորդի ճառից յետոյ, նուագել է օր. Մ. Օհանեան երգեհոնի վրա, ապա՝ Ճէճիզեանի բանախօսութիւնից վերջը՝ սևեր հագած մի խումբ դպրոցական օրիորդներ երգել են «Հայր մերը», իսկ սգահանդէսի աւարտումին, եկեղեցու բակում, հայ երիտասարդների նուագախումբը նուագել է համապատասխան հատուածներ:

◆ Ադանայի ջարդերից վնասվածներին օգնող միջազգային յանձնաժողովի կողմից թիւրքական երկրագործական բանկին է դիմել Արտաշէս Հիւրմիւզ և խնդրել, որ ի նպաստ Ադանայի աղէտեալների՝ 5,000,000 ղրուշի մի վիճակահանութիւն տեղի ունենայ:

Բանկի վարչութիւնը հաւանութիւն է յայտնել այդ առաջարկին այն պայմանով, որ այդ վիճակահանութիւնը միայն մի անգամ տեղի ունենայ: Վիճակահանութեան համար հրապարակ է հանվելու 1,000,000 տոմսակ՝ իւրաքանչիւրը 5 ղրուշ (40 կ.) արժէքով:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ռուս գրողների ինքնօգնութեան կասսան, որի փակվելու մասին նորերս յայտարարված էր, վերջնականապէս չէ դադարելու, այլ վերակազմվելու է նոր հիմունքների վրա: Պրեմիեր-մինիստրի պահանջով վերացվում է կասսային կից գործող նպաստներ բաժանող յանձնաժողովը, որը ունի իր սեփական դրամարկղը: Այդպիսով կասսան ստանալու է սոսկ ինքնապաշտպանութեան բնոյթ գրողների համար:

◆ Պետական Դումայի հոկտեմբերեան մեծամասնութեան պարագլուխ Ա. Ի. Գուչկօվը յայտնել է «Р. У.» լրագրի թղթակցին, որ Դումայի առաջիկայ նստաշրջանում ի շարս լուրջ խնդիրների քննվելու են տեղական դատարանների (հաշտարար), ժողովրդական ընդհանուր կրթութեան խնդիրները և մի շարք տնտեսական-ֆինանսական օրինագծեր:

◆ Օգոստոսի 26-ին Պետերբուրգում քաղցկեղից վախճանվեց համակրելի ռուս բանաստեղծուհի Օլգա Նիկօլայևնա Ջիւմինան, կեղծանուն՝ «Բօյ-կօտ», «Օպտիմիստ», 51 տարեկան հասակում: Հանգուցեալի մասին «Մշակը» տուել է նախանցեալ տարի առանձին յօդուած նրա 25-ամեայ գրական գործունէութեան տօնի (№ 131): «Рѣчь» լրագիրը յանձին Ջիւմինայի կորցնում է իր տաղանդաւոր ֆէլիէտօնիստներից մէկին:

◆ Ինչպէս երևում է, «ռուս գաղնակցութեան» խորհուրդը իրարանցման մէջ է ընկել բժ. Դուբրովինի գործի յայտնի վախճանով: Սօյուզնիկները մեղադրում են Ա. Ստոլիպինին, որ համաձայնվեց յանձնել բժ. Դուբրովինին ֆինլանդական դատարանին: Չը նայած Բարձրագոյն ներման, սօյուզնիկները ձգտում են արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովի միջոցով ազատել Դուբրովինին Ֆինլանդիա գնալուց:

◆ Կիևում կատարված վերաստուգութիւնները յայտնաբերել են դատարանական պրիստաւների բազմաթիւ զեղծումներ:

◆ Չելեաբինսկում ձերբակալված է օֆիցեր կին Նարուսովսկայան, որ զանազան ժամանակ կեղծ վկայագրերով Վօլժսկօ-Կամսկի բանկից ստացել է 25 հազար րուբլի:

◆ Նախկին ուղղափառ վարդապետ Միխայիլը վերջնականապէս ճանաչված է հնածէսների ընդհանուր ժողովի հաւանութեամբ եպիսկոպոս: Միխայիլը հովւելու է Կանադայում գտնվող հնածէսներին:

◆ Ընդունելութեան քննութիւնների սկզբին Պետերբուրգի գեղարուեստների ակադէմիայում թոյլատրվեց քննութիւն բռնելու ճարտարապետական բաժինը մտնելու համար չորս կանանց, որոնք աւարտել էին կանանց բարձր կուրսերի ֆիզիկօ-մաթեմատիկական բաժանմունքը: Մինչև այժմ գեղարուեստների ակադէմիան չէ դուրս թողել ոչ մի կին-ճարտարապետ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կոստանեանց Կ.—«Տ. Ներսէս Ե. Աշտարակեցի, կաթողիկոս ամենայն հայոց: Մի հատուած նրա պատմութիւնից»: Ալեքսանդրապօլ, 1909 թ., Լ.Ը 54 եր., գինն է 30 կ.:

Մեր անցեալի և միջնադարեան գրականութեան բեղմնաւոր ուսումնասիրողի ներկայ հրապարակախօսական աշխատութիւնը միայն զարմանք, տարակուսութիւն կարող է առաջացնել ընթերցողի մտքում: Ի՞նչ է գրքոյկի նպատակը. ընթերցողին հաղորդել մի շատ բնական բան, թէ որ օրից ընտրված կաթողիկոսացուն վեհապետ է համարվում. նրա՝ Կայսեր հաստատումից, թէ օծվելուց յետոյ: «Մինչև որ տեղի չունենար ձեռնադրութիւնն և օծումը, կարգ չէր՝ նորընտիր կաթողիկոսին յիշատակել պաշտամունքների ժամանակ, նմանապէս կարգ չէր, որ նա յորջորջվէր կաթողիկոս, գործածէր կարմրագեղով թղթեր և կնիք, բազմէր Էջմիածնի Մայր եկեղեցու կաթողիկոսարանի աթոռին և կրէր կոչմանն ու աստիճանին յատուկ պատիւներ ու արտօնութիւններ»: (Եր. 45):

Ունի՞ արդեօք այս ծիսական, կանոնական (каноническій) խնդիրը լայն հասարակական նշանակութիւն, որ արժենար գրքով զբաղվել. ի հարկէ ոչ:

Մասնագէտ կանոնիստները դեռ հետաքրքրութեամբ կը կարդային գիրքը, եթէ սա լինէր մի պատմական հետազօտութիւն, իր բոլոր գիտնական аппаратомъ: Սա էլ չը կայ. Կ. Կոստանեանը բաւականանում է ժամանակակից սինօդի գրութիւնները առաջ բերելով, առանց նրանց լուսաբանելու:

Մենք մի կողմ ենք թողնում հեղինակի «մեղուական» դաւանանքի քննութիւնը (տես նամանաւանդ նախաբանը): Դա անցած վերջացված շրջան է մեր մտաւոր-հասարակական կեանքի մէջ. այստեղ վերաքննելու ոչինչ չը կայ: Ո՛չ Էջմիածնի հոգևոր վերածնութիւնից պիտի սպասել ազգի «փրկութիւնը», այլ աշխարհիկ տարրի առաջադիմութեան մէջ. Էջմիածինը լաւ պիտի հասկանայ, որ նա ժամանակաւոր պատասխանատու է մի քանի խնդիրներում, որոնցից էականը՝ դպրոցական-կալուածականներն են: Նա պիտի գործէ ժողովրդի հետ, նրա միջոցով և նրա օգտին, եթէ ցանկանում է դեռ պահել իր ազդեցութիւնը մեր կեանքի մէջ, գէթ յայտնի խաւերում. Պետ. Զաքարեան

«Կաթիլներից գոյացող լճերը»—ազատ ընկ. մասին: Կ. Սուդզալցեվի, փոխադր. Միքայէլ, Բագու, 1909 թ., 23 եր.: Գինն է 5 կօպ.:

Կօօպերացիայի գաղափարը տարածող այս հանրամատչելի գրքոյկը պէտք է համարել մի ամփոփ, աջող աշխատութիւն, իսկ թարգմանութիւնը կատարված լաւ լեզուով, թէև տեղ-տեղ ոչ զերծ անգործածական, ժողովրդի համար դժուար հասկանալի խօսքերից:

Ցանկալի կը լինէր խուսափել և սրբագրական սխալներից (ձմեռվայ երկար օրերին. աւանդները և պիտոյքները տեղից են գոյացել. Փռանսիայի Բաուէրը, որը Դրեզդենի քիմիական լաբօրատօրիայի տեսուն էր. Օլօնեցկի նահանգներ և այլն):

Գրքոյկի վերջին զետեղված է սպառողական ընկերութեան մասին ժողովրդական գրականութիւնը—բոլորն էլ ռուսերէն—որը ցանկալի կը լինէր լրացնել խոստացված յետագայ աշխատութիւնում. մեր խօսքը հաշւապահութեան ձեռնարկների մասին է:

Պ. Զ.

ՄԱՄՈՒԼ

Կովկասի նուաճման յիսնամեայ յոբելեանը առիթ է տուել ռուսական թերթերին զանազան խորհրդածութիւններ անել այդ նշանաւոր դէպքի և նրա հետևանքների վերաբերմամբ: «Рус. Вѣд.» թերթը, որ ռուսական մամուլի մէջ շարունակում է իր նախկին առաջադիմական և լուրջ օրգանի դերը կատարել, հետևեալ խորհրդածութիւններն է անում.

Անցել է արդէն կէս դար, որ Կովկասը միացված է Ռուսաստանին, կէս դար, որ դադարել է պատերազմը, որ կլանեց տեղական վարչութեան ամբողջ ուշադրութիւնը, և բացվել է լայն ասպարէզ խաղաղ կուլտուրական աշխատութեան համար. բայց որո՞նք են այդ աշխատութեան հետևանքները:

Եւ քննելով Կովկասի այժմեան վիճակը, ռուս լրագիրը գալիս է պէսսիմիստ եզրակացութիւնների, ասելով որ մի քանի գործերի մէջ դրութիւնը Կովկասում վատթար է այժմ, քան նուաճման րօպէին, լեռնական ժողովուրդը սակաւ է մօտեցված քաղաքացիական կեանքին և առաջվայ նըման նրա մէջ տիրում են այնպիսի օրէնքներ, ինչպէս արիւնառու վրէժխնդրութիւնը, աղջիկների յափշտակութիւնը. առաջվայ նման նա զրկված է դպրոցներից, բժշկական օգնութիւնից, իսկ միւս կողմից նախկին պարզութիւնը և կեանքի նահապետականութիւնը շատ բաների մէջ խանգարվել է և լեռնականների տնտեսական ապահովութիւնը շատ ընկել է: Վրաստանում և Դաղըստանում գիւղացիների հողային յարաբերութիւնները դէպի հողատէրերը մնացել են բոլորովին չը կանօնաւորված և շատ տեղերում մնացել են ճորտութիւնը յիշեցնող կարգեր:

Ամփոփելով ի մի բոլոր այս բացասական կողմերը, ռուս թերթը գրում է.

Փոխանակ միացնելու և շաղկապելու Կովկասի բազմացեղ ժողովուրդը Ռուսաստանի հետ խաղաղ և համերաշխ աշխատութեամբ, վարչութիւնը կարողացաւ յետ մղել իրանից նոյնիսկ այնպիսի ազգութիւններ, որոնք ինքնայօժար կերպով ընդունել են Ռուսաստանի հպատակութիւնը և այդպիսով ստեղծվեցին արհեստական կերպով և ուռցվեցին այնպիսի հարցեր, ինչպէս հայոց և վրաց, որոնք 50 տարի առաջ գոյութիւն չունէին: Հայերը, որոնց ներկայացուցիչները յանձին Լազարևի, Լօրիս-Մելիքօվի, Տէր-Ղուկասովի և այլոց այնպիսի եռանդուն մասնակցութիւն էին ընդունում Կովկասի նուաճման և խաղաղացման, Թիւրքիայի հետ պատերազմին, դարձել են այժմ մի ինչ-որ աչքից ընկած ազգութիւն, որ ընկել է առանձին կասկածի տակ։ Աւելի լաւ չը վարվեցին վրացիների հետ, որոնց անձնատւութիւնը Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ առաջին քայլն եղաւ Կովկասի միացման շաւղի վրա։ Վերջապէս այնպիսի փաստերը, ինչպէս հայ-թուրքական կոտորածը, ցոյց է տալիս, թէ որքան քիչ բան է կատարված առհասարակ ստեղծելու համար այնպիսի կացութիւն, որ նպաստէ զանազան ազգութիւնների խաղաղ կենակցութիւն։

Այս կարծիքի դէմ մի ուրիշ ռուս թերթ առարկութիւն է անում, որ առաջ կը բերենք վաղը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 1 սեպտեմբերի

Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսի և Հոգևոր Տիրոջ ս. Օծման հանդէսը պիտի կատարվի այս սեպտեմբերի 13-ին՝ Խաչվերացի տօնի օրը։

Այն հաստատութիւններն ու ընկերութիւնները, որոնք ցանկութիւն ունեն ներկայացուցիչներ ուղարկելու Մայր Աթոռ, թող հաճեն հանդէսից մի քանի օր առաջ յայտնել Կարգադիր Յանձնաժողովին, որպէսզի նախապէս հնարաւորութիւն լինի ընդունելութեան համար կարևորը հոգալ։

Նախագահ Յանձնաժողովի՝
Գարեգին վարդապետ
Անդամ քարտուղար՝
Ներսէս վարդապետ

—

Թիֆլիս, 3 սեպտեմբերի

Ս. Մանդինեանը երէկվայ «Մշակում» ասում է. «Այն ցեխի կոյտը, որ Աղայեանը դէպի վեր է շպրտում, չեն հասնում իմ բարձրութեանը»։

Էլ ինչ կարող եմ ասել ես այսքան բարձր արարածին, քանի որ իմ ասածները նրա ականջների երկայնութեանը չեն կարող հասնել։ Բայց մարդ ասի, թէ ինչից գիտէ, որ իմ ցեխակոյտը դէպի վեր եմ շպրտում, այլ ոչ դէպի մի փոս, որի մէջ ընկած պիտի մնայ Ս. Մանդինեանը ցօրն դատաստանի։

Ղ. Աղայեան

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ*)

—

17. Դասագրքի 74-րդ երեսում գրված է. «Որպէսզի մի բոյս լաւ աճի, հարկաւոր է, որ նա ստանայ լոյս, տաքութիւն, խոնաւութիւն և օդ»։ Ճիշդ է, «լաւ» բառը աւելորդ է այդտեղ։ Այդ (բոյսեր) գլուխը ամբողջապէս արտատպութիւն է ա. տպագրութիւնից, որտեղ (երես 59) այդ բառը չը կայ։ Դուք պահանջում էք, որ բոյսերի աճեցման համար դնէի անպատճառ նաև հող բառը. իմ աղբիւրներից ոչ մէկի մէջ էլ չը կայ այդ բառը, ես էլ աւելորդ եմ համարել։ Ինչ վերաբերում է ցամաքի վրա աճող բոյսերին, ինքնըստինքեան հասկանալի է, որ հող ևս պէտք է նրանց համար,—ի հարկէ ընդհանրապէս խօսած։ Բայց չէ՞ որ մի արկղի մէջ մի սենեակում ևս, որտեղ հող կարող է չը լինել, բոյս (օրինակ՝ ձեր սիրած սոխը) ծլել, աճել կարող է։ Ապա, քննադատ, միթէ կարծում էք, որ ցամաքի վրա միայն (ուր հող կայ) կարող է բոյս աճել. Ջրային բոյսերի մասին գաղափար չունէ՞ք։ Չը լինի՞ թէ հող ասելով հանքային նիւթեր էք հասկանում. բայց չէ՞ որ դրանք կարող են պարունակվել նաև ջրի մէջ, օրինակ՝ ջրային բոյսերը։

18. Գրքիս բ. մասում տեղաւորված են ամենաանհրաժեշտ տեղեկութիւններ Ռուսաստանի, Փոքր-Ասիայի, և Հայաստանի ու Պարսկաստանի մասին։ Գրքիս երեսին էլ յիշատակել եմ այդ գլուխները, և դա դուք րէկլամ էք համարում։ Նախ՝ այդ մասը ոչ թէ 10, այլ 13 երես տեղ է բռնում. նկարներ էլ չը կան այդ մասում. այնպէս որ այդտեղ այնքան նիւթ կայ, որքան դասագրքի միւս մասերի մօտ 20 երեսում. ուրեմն կիսել էք այդ դասընթացի ծաւալը։ Երկրորդ՝ առաջաբանիս մէջ այդ հատուածների վերաբերմամբ ասել եմ. (երես III) «Այդ հատուածները շատ համառօտ են և տարրական, տալիս են ամենաանհրաժեշտ տեղեկութիւնները. հետևեալ դասարանում նոյնը պիտի անցնել մանրամասն». այս է պահանջում մեր դպրոցների ծրագիրը։ Եւ յիրաւի, Ռուսաստան հատուածը ես ամբողջապէս թարգմանել եմ Իվանովից. ինչ է, քննադատ, միթէ կարելի է պահանջել, որ հայ երեխան Ռուսաստանի աշխարհագրութիւնը աւելի մանրամասն անցնի, քան նոյն տարիքի ռուս երեխան։ Ինչո՞ւ «Կովկաս» բաժնի մասին լռել էք. տեսնում էք, որ «Կովկասի», մեր հայրենիքի, մասին աւելի մանրամասն է գրված։

19. Դասագրքիս նկարները դուք աջող չէք համարում. ի հարկէ, ճաշակի հարց է չը հաւանել Իվանովի և Կրուբերի դասագրքից վերցված նկարները, որոնց կլիշէները պատրաստված են ամենալաւ ֆիրմաներում։ Թող ընթերցողներն իրանք տեսնեն նկարները և ըստ այնմ դատեն պարոնի բարեխղճութեան մասին։

20. Քննադատը չէ խղճահարվում գրական հարցի մէջ խառնել նաև չարչիական միտումներ։ Գրքիս առաջին տպագրութեան գինը եղել է 70 կոպ., իսկ ներկայ տպագրութեան գինը՝ 60 կոպ., չը նայելով որ վերջին տպագրութեան և նիւթը, և նկարները աւելի են։ Այս ի նկատի ունենալով է, որ նա հարց է տալիս. «Չը լինի՞ թէ Ա. Աբեղեան մը հրաշալի գիւտով վերջին տպագրութիւնը աւելի էժան է նստեցրել (?) իր վրան»։ Բայց մեր քննադատը չէ բաւականանում այս հարցը տալով. չարչիավայել բացատրութիւնը նրա համար պատրաստ է,—որովհետև մինչև այժմ իմ դասագիրքը «միակն էր մեր մէջ, նա տէր եւ տնօրէն էր այդ ասպարիզում, բայց երբ նորերս լոյս տեսաւ Լ. Բաբայեանի դասագիրքը», ես, իբր թէ, ստիպված եղայ իջեցնելու դասագրքիս գինը։

Ճիշդն ասած՝ ես որևէ անգամ չեմ կարող յիշածս տողերը գրողի ներքին աշխարհը։

Քննադատ, դուք զգացէ՞լ էք որևէ պատասխանատուութիւն՝ այդ խօսքերն ասելով։ Եթէ չէ մեռած բարոյական զգացումը ձեր մէջ՝ լսեցէք իմ բացատրութիւնը, թէ ինչու դասագրքիս գինը 10 կոպէկով էժանացրել եմ։

ա) Առաջին հրատարակութիւնն արել էր «Գուտտենբերգ» գրախանութը, իսկ ներկայ հրատարակութիւնը՝ ես։ Որ այդ հանգամանքը պիտի ազդէր այս դէպքում, պարզ է։

բ) Գրքի տպագրութեան համար ծախքի մի մասը գոյանում է նկարների կլիշէներից։ Ներկայ տպագրութեան մէջ մտած նկարների կլիշէների մեծ մասը մնացել է առաջին տպագրութիւնից. կը նշանակէ՝ ներկայ տպագրութիւնը աւելի պակաս ծախք է նստել, ուրեմն և գրքի գինը կարող էր պակասել։

գ) Տպագրական պայմաններին ծանօթ ամեն մէկը կասէ ձեզ, որ այժմ նրանք աւելի մատչելի են, քան երկու տարի առաջ։

դ) Իմ դասագիրքը երբէք միակը չէ եղել ասպարէզում, պարոն։ Հարցրէք գրավաճառներին և կիմանաք, որ նոյն թւականին, երբ լոյս տեսաւ իմ աշխ. դասագրքի ա. տպագրութիւնը, Հ. Յովհաննիսեանի դասագիրքը լոյս տեսաւ բ. տպագրութեամբ և սպառվեց։

ե) Իմ գիրքը տպագրված պատրաստ էր, երբ Լևոն Բաբայեանը տպարան տարաւ իր աշխատութիւնը։

Բաւական է այս բացատրութիւնը գրքի էժանացման մասին, քննադատ։ Երևում է՝ գրքի նիւթական կողմը ձեզ ամենից աւելի է հետաքրքրել, և դուք չէք քաշվում խառնել հարցի մէջ նաև Լևոն Բաբայեանի անունը։

21. Վերջապէս՝ դասագրքիս լեզուի մասին ասում էք, որ «անմատչելի է»։ Սակայն այդչափը բաւական է «ջախջախիչ» քննադատութեան համար. «Հայագէտ» պարոնի կարծիքով, դասագրքիս մէջ «հայ լեզուն կատարելապէս մարտիրոսացման է հասցված»։ Ահա ձեզ անպատասխանատու խօսքեր. իսկ փաստե՞ր.—չը կան։

Այս ոգով առաջնորդվող «քննադատն» է, որ 162 երեսանոց գիրքը մանրամասն քննադատութեան ենթարկելու համար հարկաւոր է համարում «162×10 երեսանոց գիրք» գրել. դեռ աւելացնում էլ է, որ դա «չափազանցութիւն» չէ։

Ահա՝ քննադատութիւն գրելու յաւակնութիւն ունեցող, բայց յիրաւի խծբծանքներ հերիւրող այդ մարդն է, որ եզրակացնում է. «Իմ կարծիքով Ա. Աբեղեանի դասագիրքը, ագիտութեան այս վիթխարի արտայայտութիւնը, պատմական նշանակութիւն կարող է ունենալ», որ «դէն պիտի շպրտել աշակերտների ձեռքից այդօրինակ դասագիրքը»։

Ո՛չ, քննադատ, բանիմաց ընթերցողը գաղափար կազմեց անշուշտ ձեր ներքին աշխարհի մասին։ Բայց և այնպէս՝ ես ձեզ դարձեալ անպատասխանատու թողնողը չեմ։ Ես չեմ թոյլ տայ, որ դուք և ձեր նմանները յանդգնէք թեթևամտօրէն և նենգութեամբ ցեխ շպրտել մարդկանց վրա։ Բարձր դասելով մեր դպրոցների և աշակերտութեան շահը անհատների շահից՝ առաջարկում եմ.

Ընտրել գիտակ և բարեխիղճ մարդկանցից բաղկացած մի յանձնաժողով և նրանց քննութեան յանձնել թէ իմ դասագիրքը և թէ ձեր քննադատութիւնը։ Այդ յանձնաժողովի որոշումը պիտի տրվի հրատարակութեան, որից և ընթերցող հասարակութիւնը կը ճանաչէ թէ ձեզ և թէ ինձ։

Իմ կողմից առաջարկում եմ յանձնաժողովի անդամներ՝ պ.պ. Տիգրան Գիւզալեանին և Նիկ. Սարգսեանին։

Արտաշէս Աբեղեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սխալ է «Новое Время»-ի օգոստոսի 28-ի համարում Խարբինից տպված յօդուածը, թէ այդ քաղաքում գերմանական հիւպատոսը ընդհարվել է ռուսաց ոստիկանութեան հետ։

Քաղաքապետը կարգադրեց խունխուզների ծնողներին վերադարձնել նրանցից խլված զաւակներին այն պայմանով, որպէսզի ծնողները երեխաներին չը տան խունխուզների փակ ապաստարանները։

Դմիտրովսկի նրբափողոցում, Կօչանովայի բնակարանում երևան հանվեց թուղթ խաղացող մի մեծ խմբակ։ Ձերբակալվեցին 30 հոգի։

Զինուորական-ծովային գլխաւոր դատարանի նախագահ Պիչկինը արձակվում է պաշտօնից. նոյն դատարանի անդամ գ. լ. Բաբիցինը նշանակվում է նախագահի պաշտօնակատար։

Ի նկատի ունենալով օդապարիկներով փորձեր անելը, ծովային մինիստրը հրամայեց բոլոր նաւերին և կայաններին, երբ իրանց շրջաններում որևէ օդապարիկ կը տեսնեն, իրանցից կախված օգնութիւնը հասցնեն նրանց։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Քաղաքային դուման որոշեց Խարկովի հողային բանկից մի միլիօն ռուբլի փոխ առնել անշարժ կայքերի և հողաբաժինների գրաւականներով։

ՆԻԿՕԼԱԵՎ։ Ժամանեց ծովային մինիստրը։ Քաղաքագլուխը մատուցեց աղ ու հաց և դիմեց նրան ողջոյնի խօսքերով։ Մինիստրը մանրամասն դիտեց նաւահանգիստը և նաւամատոյցը։

ՏԱՇԿԵՆՏ։ Կուբինի շուկայում Թիֆլիսեցի մի հայ, զրկված իրաւունքներից, ձերբակալվելու ժամանակ մահացու վէրք հասցրեց դանակով մի քաղաքապահի, վէրքեր հասցրեց երեք զինուորների և մի անցորդի։ Կօզակների զօրախումբը կարողացաւ զինաթափ անել և ձերբակալել նրան։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Մայկոպի գաւառի Շիրվան ստանիցայում խփեց 30 սաժ. բարձրութեամբ նաւթի ֆօնտան։

ՊԷՆԶԱ։ Սօբակինա գիւղում հրդեհն ոչնչացրեց 81 խրճիթ բոլոր եղած-չեղածով։ Այրվեց մի կին։

ՌԻԳԱ։ Նահանգի հողատէրերի համագումարը Պետական Խորհրդի անդամ միաձայն ընտրեց Տիզէնհաուզէնին։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Քաղաքի մօտ գնացքի մէջ երկաթուղու դրամատարից յափշտակեցին 20,000 ռուբլի։ Կան վիրաւորներ։

ԿԻԵՎ։ Բացվեց մեղուաբուծութեան համառուսական համագումարը։

ՍԿՕՊԻՆ։ Բացվեց ժողովրդական ուսուցիչների առաջին համագումարը։ Եկել են 100 հոգի։ Համագումարը կը տևէ 5 օր։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Գուլեայպօլէ գիւղում այրվեցին 23 խրճիթ։ Վնասները հաւասարվում են 35,000 ր.։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացան 40, մեռան 4 հոգի, հիւանդներ կան 332։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատը 2-օրեայ վիճաբանութիւններից յետոյ ընդունեց ֆինանսական օրինագծի այն կէտը, որ վերաբերում է գահաժառանգութեան տուրքին։ Նիստը տևեց մինչև գիշերվայ ժամը 4 և 30 րօպէն։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ Մ./վ.։ «Ցեպպելին III-ը» 3 ժամ թռիչք կատարեց Մանհէյմի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Դաշնակցական դատարանը որոշեց յանձնել ռուսահպատակ Վիկտոր Վասիլեվին, որ մեղադրվում է բանկի կողոպտմանը մասնակցելու մէջ։

ՏԱՆԺԷՐ։ Օգ. 29-ին սուլթանը ընդունեց հիւպատոսներին։ Գալեարը կարդաց հաւաքական նօտան, որով բողոք է յայտնվում Ռօգի կողմնակից գերիների հետ վատ վարվելու դէմ։ Մուլայ-Հաֆիդը պատասխանեց, որ մտադրութիւն չը կայ նոր պատիժների դիմել։

ՊՕԶՆԱՆ։ Քրէական դատարանը բէյխստագի պատգամաւոր կոմս Մերժինսկուն դատապարտեց 150 մարկ տուգանքի լեհական ընտրողական ժողովում 1907 թ. յունվարի 7-ին արտասանած ճառում բռնութիւններ գործ դնելու և հասարակական հանգստութիւնը խանգարելու գրգման համար։

ՎԻԷՆՆԱ։ Ռումինական կաթոլիկական եպիսկոպոսների ժողովը որոշեց բողոքել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի այն կարգադրութեան դէմ, որի համաձայն երեխաներին պարտաւորապէս կրօնը աւանդվելու է մաջառական լեզուով։

---

*) Տես «Մշակ» №№ 187, 188 և 192.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36, տ. Ճաւճաւաձէի։
(օ. մ.) 100—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս են տեսել
Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
Գինը 15 և 20 կոպ.
ՈՒՂԵՑՈՅՑ ՏԱՐՐԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 40 կոպէկ
ՁԵՌՆԱՐԿ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Գինը 50 կոպէկ
Դիմել՝ Армавиръ, Куб. об., Регенту С. Шааняну. (օ. մ.) 902. 3—1

ԵԱԼՏԱՅԻ
հայոց դպրոցում ուսուցչի բաց տեղը արդէն գրաւված է։
Դպրոցի հոգաբարձութիւն
904. 1—1

Սարիղամիշի ծխական դպրոցի ուսուցչական խումբը արդէն կազմված է, ուստի հրաւէր չը ստացող խնդրատու ուսուցիչները ազատ են։
Հոգաբարձութիւն
(ա. օ.) 903. 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՆՈՐԱՒԱՐՏ
ՀԱՇՒԱՊԱՀ
հայ, ծանօթ նոյնպէս վրացերէն լեզուին (գրել եւ կարդալ)
Պայմանների մասին դիմել՝ Բազազխանի դիմացը, կօշկեղէնի խանութ Միքայէլ Պետրոսեան Միրզայեանցի։
(օ. մ.) 899. 3—1

ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ ՉԻԹ
ուղարկում եմ ապրանքների նմուշների հաւաքածուն և պրէյս-կուրանտը, որ պարունակում է 60 երես, վերջին տարազների նկարներով—տղամարդկանց, կանանց և երեխաների ամեն տեսակ պատրաստի հագուստեղէնի։ Սպիտակեղէն, կօշկեղէն, տնային զարդարանքների ամեն տեսակ առարկաներ ուղարկվում են ձեռնտու պայմաններով։ ՉԻԹ։ Պահանջեցէք այս հասցէով. М. А. Бабушкинъ Лодзь. № 56.
Թղթակցութիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։
(29, սեպ. 4, 10) (В. 48320) 862. 3—2

Դերբենտի հայոց դպրոցի համար հարկաւոր է
ՈՒՍՈՒՑԻՉ
շաբաթական 25 դաս, 550 ռուբ. ռոճիկով։ աւանդելու է հայոց լեզու, թւաբանութիւն, բնագիտութիւն, աշխարհագրութիւն և երգ։
Դիմել դպրոցի աւագ-ուսուցիչ՝
Ռուբէն Տէր-Գրիգորեանին
(ա.օ.) 892 2—2

ԾԱԽՎՈՒՄ Է
ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌՈՒՄ ՄԻ ՀՈՂԱԲԱԺԻՆ
որ բաղկացած է 100 դեսեատինի չափ և որի սահմաններում գտնվում են Շիխէր գիւղը, վարելահող, այգիներ և անտառ։
ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Դիմել՝ Թիֆլիս, ԷԿՕՆՕՄԻԱ տպարանին։
ա. օ. 840. 10—9

Թիֆլիսի **ս. Սարգսի** եկեղեց.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնն որոշել է բանալ առաջին բաժանմունք, եթէ թոշակ վճարող աշակերտ-աշակերտուհիների թիւն այդ բաժանմունքում կը հասնի քառասունի տարեկան տասը ռուբլի վճարով։ Կայ մի քանի տեղ երրորդ բաժանմունքում։
Ցանկացողները թող դիմեն մինչև սեպտ. 10-ը, առ. ժ. 8 և կէսից մինչև ժամը 1-ը, դպրոցիս աւագ-ուսուցչին։
Հոգաբարձութիւն
(կ.չ.ու.) 884. 5—3

Մամուլի տակից դուրս եկաւ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1) Դասատետր կրօնի Բ. տարի
2) Դասատետր կրօնի Ա. » (բարեփ.)
Իմ կրօնի դասագրքերը ցանկացողները կարող են դիմել Կովկասի բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовск. ул. 20)։ Զեղջ 20, 25 և 35%.
Սահակ ա.-ք. Սահակեանց
825 (ե. ու.) 10—5

Նոր լոյս տեսաւ
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Հաւսման-Ռուգանի
«Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածուների Դ. տարվայ դասընթացքը» . . . 35 կ.
Նոյնի Գ. տ. . . . . 30 կ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին։
(կ.չ ու.) 885. 5—3

Օսլայի գործարանը
Ի. Գ. ԿԱԼԻՏԱԵՎԻ, Բօգօդուխօվում, Խարկովի նահանգ, առաջարկում է կարտոֆելի ալիւր։ Նմուշները և վաճառքի պայմաններն ուղարկվում են ըստ պահանջման։
(ու.) (М. 240089) 719. 8—6

Լոյս տեսաւ
Ե. Թաւարբէկեանցի
ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ
Գ. և մասամբ Դ. տարիների համար. Գինն է 50 կ.։ Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և կազմողին՝ Միքայէլեան փ. № 8.
(օ. մ.) 880. 5—3

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏԻ և Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
Նախապատմական մարդը
և
Հայկական առասպելներ
Գինն է 50 կ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Գինն է 75 կ.
Պատկերազարդ դասագրքերը 3-րդ և 4-րդ բաժանմունքների, ինչպէս նաև ժողովրդական ընթերցանութեան համար, վաճառվում են «Գուտտենբերգ», «Կենտրոնական» և «Փարոս» գրավաճառանոցներում։
805. (օ. մ.) 10—7

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԼԵՒՈՆ ԲԱԲԱՅԵԱՆԻ
ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Հրատարակ. «Գուտենբերգ» գրախանութի.
Ա. Բնական մաս.—Չորրորդ և մասամբ երրորդ տարվայ դասընթացք.—Բնական աշխարհագրութիւն։ Ռուսաստան։ Կովկաս։ Առաջաւոր Ասիա։ Փոքր Ասիա։ Հայաստան և Պարսկաստան։ Աշխարհագրական զրոյցներ։ 85 մեծ. նկարով և համաձայն հայոց դպրոցների ծրագրի։
Գինը՝ 60 կոպ.
Բ. մաս.—5-րդ տարվայ դասընթացք։ (Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա)։
Գինը՝ 65 կոպ.
Գ. մաս.—6-րդ տարվայ դասընթացք։ (Եւրոպա)։
Գինը՝ 50 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ». գրախանութին։
Գումարով գնողներին զեղջ։
(օ. մ.) 872. 3—3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
վաճառվում են Գր. ա.-ք. Երզնկեանցի հետևեալ աշխատութիւնները.
Քրիստոնէական բարոյագիտութ. գ. 50 կ.
Ուսում աստուածպաշտութեան. » 50 կ.
Աշխարհագրութիւն Տարրական դասընթացք Հայաստանի աշխարհագրութեան համառօտ տեսութեամբ 60 կ.
Թւաբանական խնդիրներ եւ օրինակներ
Տարրական դասընթ. ա. և բ. տ., 30 կ.
գ. և դ. տարի . . 35 կ.
851. (ե. հ.) 10—4

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների
Փոխադրեց և յարմարեցրեց հայոց դպրոցների ծրագիրներին
ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Առաջին տարի		գինն է 12 կ.
Ա. պրակ (I և II տարի միասին) չորրորդ էժանացրած տպագ.		25 կ.
Բ. պրակ (III տարի) երրորդ տպագրութիւն		30 կ.
Գ. պրակ (IV տարի) երկրորդ տպագրութիւն		30 կ.
Դ. պրակ (V տարի)	Ըստ Շապօշնիկովի և Վալցովի	40 կ.
Ե. պրակ (VI տարի)		50 կ.
Ձեռնարկ թւաբանութեան		50 կ.

Սոյն բոլոր ժողովածները ընդունված և գործադրվում են մեր գրեթէ բոլոր միջնակարգ հոգևոր և ծխական դպրոցներում։
Գումարով գնողներին 20% զեղջ։
Պատրաստվում է տպագրութեան համար. «Թւաբանութեան դասաւանդումն Ա. և Բ. տարում—մեթոդական ցուցմունքներ ուսուցիչների համար»։
Դիմել Թիֆլիսի «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութին (Тифлисъ, книж. магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“). կամ փոխադրողին՝ Тифлисъ, Абасъ-Абатская площадь.
(կ. չ. ու.) 829. 10—6

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսեր
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24/4)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։ Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն)։ Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։
Գրելու մեքենայի վրա գրելու դասեր։
⟶ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ⟵
Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.
Համառօտ ծրագիրը և կանոնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ
(օ.մ.) 774. 20—9

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.